24րդ ՏԱՐԻ ԹԻՒ 6527 | 27 ՅՈՒՆԻՍ 1907 | ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 29 ՃԸՄԱԶԻ-ԻՒԼ-ԷՎՎԷԼ 1325 | 10 JUILLET 1907 | 24me année № 6527

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
"ԱՐԵՒԵԼՔ„ ՕՐԱԹԵՐԹԻ
Կ. ՊՈԼԻՍ, ՂԱԼԱԹԻԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ 60 Ղրշ.
ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 105 »
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 25 Ֆրն.
ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՍԸ ՄԵՐ ՎՐԱՅ
20 էջը 1 ղրուշնոց փուլ
1 մէտ.ի նմանաւ կ'ընդունուի

10 ՓԱՐԱ

# Արեւելք

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ارەولك
درسعادتده غلطەدە ارەولك غزتەسی ادارەخانەسی

DIRECTION
DU JOURNAL ARMÉNIEN
"ARÉVELK"
CONSTANTINOPLE - GALATA

10 PARAS

## ՆԱՐԼԸ ԳԱԲՈՒԻ ԵՒ ԲԵՐԱՅԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՆԵՐԸ

Ա.

Առ. Արժանապատիւ
Տ. Միքայէլ Քահանայ Աճեմեան
Մայր Եկեղեցւոյ

*Սիրելի Տէր Հայր*

Մեծ հաճոյքով կարդացի այն կարեւոր տեղեկութիւնները, զորս Արեւելքի 6518 և 6521 թիւերուն մէջ հրատարակած էիք վերջերս, Բերայի հին հիւանդանոցին վրայ ըրած բանախօսութեանս առթիւ. իմ անկեղծ շնորհակալութիւններս կը յայտնեմ Ձեզ հրապարակաւ այն լուսաբանութիւններուն համար զորս նկրտած էիք տալ ինծ, Նարլը Գաբուի և Բերայի գրեթէ մոռցուած հիւանդանոցներուն մասին. բայց կը խնդրեմ որ Դուք ալ ինծ ներողամիտ գտնուիք, որպէս զի Ձեր դիտողութիւններուն պատասխանեմ իմ քանի մը աննշան դիտողութիւններով։

Ձեր ինծ դէմ դիտողութիւններն սկսելէ առաջ, սիրելի Տէր Հայր, նկատելու էիք նախ՝ թէ բանախօսութեանս նիւթը՝ Բերայի հիւանդանոցն էր միայն և ես չէի կրնար աւելի տարածուիլ Նարլը Գաբուի Հիւանդանոցին վրայ. յետոյ խորհրդածելու էիք պահ մը, թէ Բերայի Հիւանդանոցին պէս չոր ու ցամաք նիւթի մը վրայ քիչ ու շատ «պրպտումներ» (ձեր բառով) ընող մը չէր կրնար անշո՛ւշտ անտարբեր մնացած ըլլալ Նարլը Գաբուի հիւանդանոցին նկատմամբ ալ և գո՛նէ անգամ մը, անգամ մը միայն հարցնելու էիք ինծ թէ ինչ գիտէի ես անոր մասին. բանախօսութիւնս իբրեւ կատարեալ գործ մը չէր որ ներկայացուցի Հարիւրամեակի Հանդէսին, և Դուք պէտք չունէիք այդչափ յուզումի, զոր զգացի թէ ունեցաք նոյն իսկ բանախօսութեանս միջոցին. գիտէք անշո՛ւշտ. թէ փոքրիկ քարերն են, որ իրարու վրայ, քով քովի շարուելով կը ձեւացնեն մեծ շէնքեր։

Անցնինք ուրիշ դիտողութիւններուս։

Երբ կը գրեմ, թէ՝ Պոլսաբնակ Հայն ունեցաւ իւր առաջին հիւանդանոցը Նարլը Գաբուի հովասուն ու առողջարար ծովեզրին վրայ Ղափանցի Գէորգ Պատրիարքին օրով՝ 1751ին. և կը յաւելում նաեւ՝ թէեւ աւելի հին թուականներով հայ հիւանդանոցներու շինութեան համար Կայս. Ֆէրմաններ տրուած են կ'ըսուի, խօսքերը, Դուք կը կարծէք թէ այդ թուականէն առաջ հաստատուած հիւանդանոցի մասին տեղեկութիւն ես չունիմ. վերջի խօսքս միթէ բաւական չէ՞ յայտնելու հակառակը, երբ մանաւանդ ծանօթագրութեան մը մէջ ալ ընթերցողը կը յղեմ՝ իմ «Հարիւրյիսնամեակ Ազգ. Հիւանդանոցին» աշխատութեանս՝ հրատարակուած 1901ին։

Կը ցաւիմ որ չէք բարեհաճած ակնարկ մը նետել այդ գրուածին վրայ, և կ'երեւի թէ միայն ի համբաւոյ լսած էք իմ պրպտումներս և չէք բնաւ կարդացած հրատարակած բժշկական կենսագրութիւններս, որոնց մէջ քանիցս խօսած եմ արդէն Նարլը Գաբուի հիւանդանոցի մասին։

Նարլը Գաբուի հին հիւանդանոցի մասին առաջին անգամ Բ. Քէչեան խօսած է 1888ին իր «Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի պատմութեան» մէջ։

1893ին ծանօթացուցած եմ Պօղոս Անտոնեան-Շաշեան անուն արքունի բժիշկ մը՝ Նարլը Գաբուի Հիւանդանոցին ժամանակակից, որուն կենսագրութեան մէջ գրած եմ՝

«Նարլը Գաբուի Հիւանդանոցը, որ մեր հին Հիւանդանոցն էր, բացուած է 18րդ դարու առաջին կէսին։ 1743ին Սուլթան Մահմուտ Ա. անոր համար մեր ազգին շնորհած է Կայսերական Բարձր Հրովարտակ մը, զոր 1755ին իր եղբայրը Սուլթան Օսման Գ. հաստատելով կը հաստատէ։ 37 տարի յետոյ՝ 1792ին Սուլթան Սէլիմ Գ. նոր Հրովարտակով մը վերստին հաստատէ իր նախնեաց շնորհած իրաւունքները Նարլը Գաբուի հին Հիւանդանոցին, ևն.։ (Տե՛ս Արեւելք Ժ. տարի թիւ 2843, 26 յունիս 1893)։

Իսկ «Հարիւրյիսնամեակ Ազգ. Հիւանդանոցին» աշխատութեանս վերջն ալ՝ 1901ին կը գրէի՝

«1751 տարին ժանտախտի սոսկալի համաճարակի տարի մըն էր, ժանտախտի վրայ գրուած եւրոպական-բժշկական հրատարակութիւններէ գիտենք, որ այդ տարին ժանտախտը Թրանսիլվանիոյ մէջ յունիս ամսոյ սկիզբը ծագում կ'առնէ, և հետզհետէ սաստկանալով ու դրացի երկիրներն ալ ճարակելով, օգոստոսի մէջ կը հասնի Կ. Պոլիս, ուր բաւական աւերներ կը գործէ։ Շատ հաւանական է որ 1751ին Նարլը Գաբուի Հիւանդանոցն ալ նաեւ իբրեւ ժանտախտանոց ծառայեց, և Գէորգ Ղափանցի Պատրիարքը՝ որ 1751 յունիս 15ին կը յաջորդէր Մինաս Ակնեցի Պատրիարքին, անշուշտ մեծ դեր ունեցաւ այդ Հիւանդանոցին բացմանը մէջ, որուն Կայսերական Ֆէրմանը 1743ին շնորհուած է Ազգին, թերեւս Նալեան բարեյիշատակ Յակոբ Պատրիարքի խնդրանքով։ (Տե՛ս Սուրհանդակ Գ. տարի թիւ 643, 30 մարտ 1901)։

Կը տեսնէ՞ք, Տէր Հայր, թէ ոչ Նարլը Գաբուի Հիւանդանոցի նախնական թուականին՝ 1743ին անգէտ եմ, ո՛չ ալ անոր սկզբնապատճառին՝ Յակոբ Նալեան Պատրիարքին անունը ծածկած եմ, բայց կը խոստովանիմ թէ կը սպասէի ցարդ, որ քաղէի այս մասին աւելի ստոյգ և աւելի վաւերական տեղեկութիւններ, զորս ներեցէք ինծ ըսել թէ դուք ալ չէք կրցած տալ. բաւական չէ ըսել թէ՝ «Հայոց առաջին և միակ հիւանդանոցը հաստատուած է 1743 թուականին Նարլը Գաբուի ծովեզերքը, երջանկայիշատակ Սուլթան Մահմուտ Ա. կայսեր Ֆէրմանով, որուն հաստատուելու սկզբնապատճառը եղած է Զմառայի Տ. Յակոբ Պատրիարք Նալեան, Մայր Եկեղեցւոյ միւթէվէլլի Մահտեսի Լութֆի Օհաննեանի օրով». պէտք է որ այդ տեղեկութեան աղբիւրը ցոյց տաք, և նոյնութեամբ հրատարակէք, եթէ ունիք այդ մասին հին գրաւոր բան մը, որովհետեւ հաւատալով հանդերձ թէ Նարլը Գաբուի Հիւանդանոցի սկզբնապատճառը Նալեան Յակոբ Պատրիարքն եղած է, ես կը կարծեմ թէ Հիւանդանոցը բացուած է յետոյ՝ 1751ին՝ ինչպէս ցոյց կուտան Հ. Ինճիճեանի և Սարգիս դպիր Յովհաննէսեանի գրածները՝ զորս պիտի յիշեմ յետոյ։

«Երբ կ'ըսեմ թէ՝ գրեթէ կէս դար շարունակուելէ յետոյ, այդ Հիւանդանոցը վար կ'առնուի շատ հին ըլլալուն համար, և կը վերաշինուի աւելի մեծ և աւելի ընդարձակ. 1794ին է որ տեղի կ'ունենայ Նարլը Գաբուի Հիւանդանոցին վերաշինութիւնը. այդ թուականին իսկ է որ կը կառուցուի Պէյօղլուի Ազգ. Հիւանդանոցը, դուք կ'ենթադրէք թէ՝ «իմ այդ խօսքերս բոլորովին ենթադրական են և ո՛չ վաւերագրերէ հաւաքուած, քանի՛ որ չունիմ Նարլը Գաբուի Հիւանդանոցին պատմութիւնը ի ձեռին»։

Մարդ շատ մեծ համարձակութիւն մը ունենալու է որ հարիւրամեակի հանդիսաւոր զումարման մը մէջ այդպիսի ենթադրութիւն մը արտասանէ ու յետոյ ալ հրատարակէ. ո՛չ Տէր Հայրս, ո՛չ բերնէս ու գրչէս հանած և ո՛չ մէկ խօսք ենթադրական չէր, այլ քաղուած էր շա՛տ վաւերական աղբիւրներէ։

Հ. Ինճիճեանի գործերէն քաղած եմ ես զանոնք, ինչպէս նաեւ Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեանի ձեռագիր երկասիրութենէն, որուն դուք դժբաղդաբար չէիք հանդիպած, և որուն վրայ յետոյ կը խօսինք։

Ձեր ենթադրական կարծած այդ խօսքերս երկիցս արդէն հրատարակած եմ, առաջին անգամ 1896ին՝ Կարապետ բժիշկ Ախթէր Յովհաննէսեանի կենսագրութեան մէջ, այն բժիշկին՝ զոր Նալեան շա՛տ կը սիրէր և որուն նուիրած է Սա իր՝ 1760ին տպած «ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ» անուն գրքոյկը, (տե՛ս «Ճէրիտէի Շարգիյէ» թիւ 3182 և 3183, 21 և 22 Դեկտ. 1896) և երկրորդ անգամ ալ՝ 1901ին «Հարիւրյիսնամեակ Ազգ. Հիւանդանոցին» գրութեանս մէջ. թո՛ղ երրորդ անգամ մըն ալ հրատարակուի այն ուրեմն։

Սարգիս Դպիր կը գրէ,

«Առաջին դուռն քաղաքիս Նարլը «Գաբու կոչեցեալ, և դիրք դրանս այսորիկ բարձր է, և սակս զոլոյ նախագոյն «ի սմա ծառոց նռնենեաց, կոչեցեալ է «դուռնս այս Նարլը Գաբու։ Գոյ աստանօր առ ծովեզերն, մերձ ի դուռն «պարիսպին Հիւանդանոց մի զոր ստացան «մերայինք ի թուականին **ՌՄ** (1200+551 «=1751)։ Եւ ապա վասն զոլոյն հին «և խախուտ, բազում ծախիւք **ՆՈՐՈԳ «ՇԻՆԵՑԻՆ ԶՆԱ Ի ՀԻՄԱՆԷ** մեծ և «ընդարձակ՝ ըստ ամենայն պիտոյից ի «թուականին **ՌՄԽԳ**, (1243+551=1794), «ուր դարմանեալ տածին անտերունչ և «աղքատ հիւանդք տրօք ողորմութեան «հաւատացելոց։» (**ՍԱՐԳԻՍ ԴՊԻՐ** «Երկասիրութիւն Վոսփորի» ձեռագիր, էջ «18-19)։

Հ. Ղուկաս Ինճիճեան ալ կը գրէ,

«Իսկ Հիւանդանոց Հայոց՝ է մերձ ի «դուռն Նարլը Գաբուին առ ծովեզերբն, «որ շինեցաւ ի 1751, ի ժամանակս Ղափանցի Գէորգ Պատրիարքին, և նորոգեցաւ ի 1794։» (տե՛ս Աշխարհագրութիւն Չորից մասանց աշխարհի, Հ. Ղ. Վ. Ինճիճեան, տպ. Վենետիկ 1824, հատոր Ե. էջ 116։)

Սոյն երկու յիշատակարանները Ձեր Արժանապատուութեան ներկայացնելովս, կը հարցունեմ, թէ Հիւանդանոց մը չի՞ կրնար հիննալ, չի՞ կրնար վերաշինուիլ, ի՞նչ մեղք կը տեսնաք 1794ի վերաշինութեան ընդունելուն մէջ. Սարգիս Դպիր և Հ. Ինճիճեան երկուքն ալ ականատես վկաներ են այդ վերաշինութեան։ Ինչ պատճառ ունէի ես հնարելու բան մը, զոր 18րդ դարու հայ մատենագրութեան պատիւ եղող այդ երկու կարեւոր գրիչներն աւանդած են։

Նարլը Գաբուի Հիւանդանոցի վերաշինութեան այս 1794 թուականը բնաւ կասկածի տեղի չի թողուր և ինքզինքիս կը հարցունեմ թէ արդեօք այդ վերաշինութեան հետ յարաբերութիւն մը չունի՞ սա հետեւեալ

«Է»
ՅԻՇԱՏԱԿ Է ՔԱՐԱՇԷՆ ՍԵՆԵԱԿՍ
ԱՐԵՒԵԼՑԻ ՊԱՊԱՅԻ ՈՐԴԻ ՄԱՀՏԵՍԻ
ԿԱՐԱՊԵՏԻՆ, ԵՒ ԿԵՆԱԿՑՈՅՆ
ՄԱՀՏԵՍԻ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ, ԵՒ ԻՒՐ
ՈՐԴԻ ՄԱՀՏԵՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ.
ԵՒ ՀԱՄԱՅՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ ԵՒ
ԿԵՆԴԱՆԵԱՑ ՀՈԳԻՈՅՆ
Ի 1243 ԹՈՒԻՆ
ՅՈՒՆՎԱՐԻ
Ա.

արձանագրութիւնը, որ միեւնոյն 1243+551=1794 թուականը կը կրէ և դրոշմուած է ու կը կարդացուի դեռ այսօր Նարլը Գաբուի Ս. Յովհաննէս Աւետարանիչ եկեղեցւոյն կամարակապ քարաշէն Թաղական Խորհրդարանին ճակատը։ Ձեր խորհրդածութեան առարկայ առնելով ուրեմն սոյն վերագրեալ յիշատակարանները, կը փութամ յայտնել ձեզ, թէ բնա՛ւ և բնա՛ւ անծանօթ չէ ինծ. այն վաւերագիրը, զոր Նարլը Գաբուի Հիւանդանոցին վրայ հրատարակած դիտողութիւններնուդ շարքին մէջ կը ներկայացունէիք։

Այդ վաւերագիրը բաժնիդ կոնդակ մըն է ձեռագիր, որ ցարդ կը պահուի Նարլը Գաբուի եկեղեցին. Դուք ձեր հրատարակած մասը բուն իսկ կոնդակէ՞ն ընդօրինակած էիք, թէ ո՞չ ուրիշ տեղէ մը քաղած, չգիտեմ, վասն զի՝ ներեցէ՛ք ինծ ըսել, թէ թուականի մեծ սխալ մը ունիք մէջը, և տեղ տեղ ալ քանի մը տարբերութիւններ։ 1898ին տեսած եմ զայն և ո՛չ միայն ընդօրինակած ուշադիր հաւատարմութեամբ, այլ և՝ հանել իսկ տուած եմ անոր լուսանկարը, ուրկէ օրինակ մը պատրաստ եմ նուիրել Ձեզ, եթէ կ'ուզէք։

Բայց կ'արժէ որ նոյնութեամբ և ամբողջութեամբ հրատարակեմ զայն այսօր, մանաւանդ վերջը ուրիշ աշխատողներու համար թերեւս օգտակարութենէ զուրկ չըլլայ այն։

30 կամ 35 հարիւրորդամետր երկայնութեամբ, 20 կամ 25 հարիւրորդամետր լայնութեամբ բամբակեայ թուղթի վրայ նօտր գրերով գրուած կոնդակ մըն է այս շատ հինցած, որ հինգ ձեռքի գիր կը պարունակէ։

Կոնդակին ճակատը դրոշմուած է Զաքարիա Պատրիարքին կնիքը՝ վրան՝

ԿՆ. ՔԻ ԾՌ. ԶՔՐԻԱ ՎՐԴ.Տ
ՊՏՐԻՐՔ ԿՈՍ. ՌՄԻԲ

արձանագրութիւնը, որ Զաքարիայի Պատրիարքութեան առաջինէն երկրորդ տարիին թուականը կը կրէ։

Սոյն կնիքին ներքեւը կը կարդացուի Զաքարիա Պատրիարքին բուն իսկ ձեռագիրը, որ կ'ըսէ.

«Սոյն 'ի ներքոյ բանիս հաստատութեան վասն, թէ՛ ներկայ գտանեցեալ «օրհնեալ գործակալք և թէ առ ապա «եկողք, ես և համայն տեսողք սոյն «գրոյս ծանիջիք, զի սոյն յիշատակիս «յաւիտենականապէս հաստատ մնալոյն «ո՛վ որ ջանասիրութեամբ հոգ տանիցի, «վայելեսցէ զշնորհսն Աստուծոյ հոգեպէս «'ի յաւիտեան և աստ մարմնաւորապէս, «որպէս և տէր սոյնոյ յիշատակիս վայելէ, իսկ՝ ներհակ չարժմամբ չկամեցօղք հաստատութեան բանիս, զներհակն 'ի հոգի և 'ի մարմին ընկալցին. «Ահա Ես Զաքարիա Պատրիարքս մեծի «Պօլսոյ կնքեցի 'ի վերոյ իմով կնքով 'ի «մշտնջենաւորութիւն բանիս հաստատութեան, հաճոյ թուեցի։»

Զաքարիա Պատրիարքին գրած սոյն յիշատակագրութեան կը յաջորդէ բուն վաւերագիրը՝ որ է հետեւեալը.

«Զօրութիւն և յայտարարութիւն գրոյս «այս է, որ ես Սախաղատէ Պարոն Գրիգորս որ եմ նազըր և վերակացու Սամաթիոյ Նարլը Խաբուի դրսի կողմն «եղեալ Հայոց ազգին մերոյ անուանն «բազում աշխատութեամբ սահմանեալ «ծովահայեաց Հիւանդանոցին, և նոյն «Հիւանդանոցին հիւճէթի չէրիով միւթէվէլլի կարգեցեալ Խավաֆ Մհր. Ցարութիւնն, երկոքեանքս զայս պայմանադրութեան գիրս վասն այն գրեցաք և «մատանեաւ մերով մատնահարեցաք և «տուաք ի ձեռս Ապուչեխցի առ Տէր «հանգուցեալ լուսահոգի Մհր. Խանըմի «որդի Մհր. Յոհաննէս յորդելի Ամիրային, ի թվին ՌՄԼԸ, և Նոյեմբերի տասնին, որ էր տօն Սրբոց Հրեշտակաց և Հրեշտակապետաց, և ի Պատրիարքութեան մեծի Պօլսոյ Տեառն Զաքարիայ բարեձէր և Արհիապանծ Եպիսկոպոսին, և ի յերկրորդ նուիրակութեան Սրբոյ և մեծի Աթոռոյն Էջմիածնի «Տեառն Մինասայ խոհեմազարդ և Աստուածիմաստ վարդապետին։ Վասն զի «այս վերոգրեալ մեծազգի և բարեհամբաւ բարեաց յիշատակի արժանի Մհր. «Յոհաննէս ամիրայս ի սոյն Հիւանդանոցիս կից քէրէստէճեաց խանութ մի ունէր վեց հարիւր կանգուն, որպէս որ «գրեալ կայ ի մէջ վախըֆնամէի գրոյն, «օրհնեալ քանի մի սենեկօք, և էր իւր «հալալ արդեամբ բառացեալ սեպհականն։ Այժմ այս բարեձէր և ողորմասիրտ ամիրայս, հոգւոյ ակամբ տեսեալ «զփոքրկութիւն հիւանդատանն և զխեղճութիւնն անդ եղելոցն, և ոչ զանց առնելով նման հնոյ քահանայից և Ղեւտացւոց, այլ որպէս այն բարեբարին Սամարացւոյն, գթացաւ անկելոյն առ ճանապարհաւն Երիքովի, և իբր նման նըմա դարմանեաց զնոսա։ Վասն զի փափանակ տանելոյն զնոսա ի պանդոկն, «զպանդոկն բոլորովին նոցա շնորհեաց, «այսինքն զխանութն զայն առանց դրամի «ձրիապէս պարգեւեաց նոցա։ Եւ ի տեղի «երկ դահեկանին տարին երկու անգամ «զնոսա ի բաղանիս յղել և կերակրել «պատուիրեաց մեզ։ Վասն որոյ և մեք «թէ յայժմ գտանեցեալ վերակացուքս «կամ հոգաբարձուքս, և թէ զկնի մեր «եկող միւթէվէլլիքն կամ նազըրքն, «պարտիմք զայս աւանդութիւնս չի խափանել և հաստատուն պահել և այսպէս «առնել։ Նախ ի Սուրբ Յակոբ Մծբնայ «Հայրապետի շաբաթ օրն զամենայն հիւանդսն որք կան անդ, ի բաղանիս «տանել տամք, և կերակրի օրն իւրեանց «բաւական լինելոյ չափ հերիսայ, այսինքն «քէշկէկ եփել տամք և յագեցուցանեմք զնոսա։ Նմանապէս և ի Վարդավառի դիմացի շաբաթ օրն ի բաղանիս, և կերակրի փիլավ զերտէ եփել տամք և կերակրեմք զնոսա, և «ի վերայ այսր ամենայնի տարին եւս «անգամ մի Ս. Գէորգայ եկեղեցին գիշեր ժամ մի և քառասնից մի կատարել «տամք, որպէս որ սահմանեալք են նոյն «Ս. եկեղեցւոյ օրհնեալ դպիրքն և մեծամեծքն։ Եւ այս յատկապէս վասն հոգւոյ վերոգրեալ բարեձէր մահտեսի ամիրային թէ իւրն և թէ համայն օրհնեալ «ննջեցելոցն և պահպանեցեալ կենդանեացն, թէ այժմ գտանեցելոցն և թէ «յապագայիցն. այլ և իւրն կամ իւրայնոցն հաւատարմաբար ծառայութիւն կամ «սպասաւորութիւն անողաց կենդանեաց «և առ Տէր հանգուցելոց հոգւոյն։ Արժան և վայելուչ համարեցաք զայս «բարի աւանդութիւնս յամենայն տարի «լիապէս կատարել և ոչ զանց առնել, «վասն զի մեծ և մեծ բարերարութիւն «և անպատմելի քաջութիւն արար ազնուազարմ ամիրայս, քանզի խիստ և «խիստ հարկաւորութիւն ունէր խանութս «այս՝ սոյն հիւանդանոցի տանն. կ'երեմք «առել թէ իբր նոր նորոգեցաւ, ողորմելի «հիւանդաց տունն, թէ լայն և ընդարձակութեամբ, և թէ ի նմանէ գոյացեալ արդեամբքն, որոյ Տէր եղիցի վարձահատոյց և զարիտուր երկրաւոր նիւթական և անցաւոր տանս այս, փոխայն «երկնաւոր յաւիտենական իւր մեծամեծ «զնա հանդերձ իւրայնովքն ամէն։ Ահա «մեք մատնահարեցաք զայս պայմանագիրս, և զկնի մեր եղեալ նազըրքն և «միւթէվէլլիքն եւս իւրեանց մատանեան պարտին մատնահարել և գրեցեալն ի սմա կատարել և ի վերայ սորա «նազըրք և միւվէլլայք են, նախ մահտեսի ամիրայի եղբօր որդի Յակոբ ամիրայն յորդւոց որդի և նոյն մահտեսի «Յոհաննէս ամիրայի համեստուհի խաթուն «մահտեսի դուստրն, և փեսայն խոհեմազարդ և յԱստուծոյ օրհնեալ պարոն «Հայրապետն և ի նոցանէ ողորմութեամբն «յԱստուծոյ բողբոջեցեալ պատուղքն յորդւոց որդի։ Այլ և ի պատեհ ժամու «գտանեցեալ Ս. Գէորգ եկեղեցւոյ աւագերէց և աթոռակալքն, և եւս տեսօղք «և ընթերցօղք գրոյս պատուելի հարք և «եղբարք ով ոք և իցէք զնշանն Քրիստոսի ի ճակատս ձեր ունեցօղ հաւատացեալք, ի սէրն Աստուծոյ պարտիք գործակից լինիլ սոյն բարի «մտօք սահմանեալ իրացս, ըստ Սրբազանին Պօղոսի որ պատուիրէ զԱստուած «սիրողացն՝ գործակցիլ բարւոյն, և ըստ «միւսոյ Սրբազանի Առաքելոյն, մեծ «մեղք են (ասէ) գիտողաց և ոչ առնողաց զբարին. և առնօղքն և կատարօղքն լիցին օրհնեալք ի Հօրէ և յՈրդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Նոյնպէս և խափանել կամեցողքն պարտաւոր լիցին առ ահեղ ատեանին Քրիստոսի խղճալի հիւանդացն այնոցիկ և պարտապան հրեշտակաց նոցա, որք միշտ կան առաջի «Աստուծոյ և տեսանեն զերեսս Նորա «բաւ է։»

Կոնդակին ձախ կողմը լուսանցքի մը մէջ ալ Էջմիածնի նուիրակ Մինաս վարդապետը իր կնիքով, իր ձեռագիր վկայութիւնը կը գրէ սապէս.

«Սոյն հոգեշահ և Աստուածահաճոյ իրականութեանս վերահասու և հաւան եղեալ կնքեցի Սրբոյ Էջմիածնի մեծի «Աթոռոյն Միաբան, և Մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Նուիրակ Մինաս եպիսկոպոս առ ի հաճութիւն ամենայն տեսողաց և յորդորումն բարեաց «անձանց առ այսպիսի հոգեւոր գործ, «յօժարամիտս լինել և մի՛ ներհակել, զի «օրհնութեան և խաղաղութեան որդիք «լինիցին Ամէն»։

Մինաս վարդապետի վկայութեան կը յաջորդէ հիւանդանոցի վերակացու Սախաղատէ պարոն Գրիգորի գիրը՝ որ է.

«Ես սախաղատէ պարոն Գրիգորս վերակացու և նազըր բարեյիշատակ և յաւերժական գովութեան արժանի չահաւէտ գործոյ, բարեացապարտ և ազնուազարմ Մհր. Յոհաննէս ամիրայի, յօժարամիտ և կամակար սիրով յանձն «առի, վաստակակուռն ջանիւք հոգ «տանել այսմ՝ զի այժմ և առյապայ «հաստատուն մնասցէ, յաղագս որոյ կնքեալ ստորագրեցի»։

Սոյն վկայութեան ներքեւ կայ կնիք մը՝ որուն վրայ կը կարդացուի թուրքերէն كركور և հայերէն Գրիգոր անունները, և յետոյ ալ հիւանդանոցին միւթէվէլլի և հոգաբարձու Մահտեսի Խավաֆ Յարութիւնի գիրը՝ որ է հետեւեալը.

«Ես խավաֆ Մահտեսի Յարութիւնս «հոգաբարձու և միւթէվէլլի օգտաշատ «և հոգեւոր իրողութեան, բարեպաշտօն «և մեծազգի Մահտեսի Յօհաննէս ամի-

---

«ԱՐԵՒԵԼՔ»Ի ԹԵՐԹՕՆԸ —98—99—

ՏԱՆԻԷԼ ԼԸՍԻՒԷՕՐ

# ԿՆՈՋ ՄԸ ԿԵԱՆՔԸ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

## ՏԻԿԻՆ ԴԵՍՊԱՆՈՒՀԻՆ

Բ.

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵՍԱԼԻՆ ՄԸ

Մաքսիմ տ'Էրքիւանսի սրահի մը մէջ կը գտնուէր, որուն վեց պատուհանները կը նայէին Բօլէժ Բօմէնի վրայ։ Սրահին ձեղունը նկարուած էր Աննիպալ Քարրաչի կողմէ և Լէբանթէի ճակատամարտէն դրուագ մը կը ներկայացնէր, ուր տէ Թրանի իշխան մը կը հրամայէր պապական նաւատորմի մը։

Այդ փառաւոր և խստամբեր երեւոյթով սրահը մտաւ Բլօտիա, որ ազնուական կնոջ մը երեւոյթն ունէր, հպարտ ու կորովի դէմքով։

Կոմսը, որուն մազերը ճերմկած էին քունքերուն վրայ, երիտասարդական խայտանքներ կ'ունենար այդ կնոջ նկատմամբ։

Իր անհամբեր ու սրտնեղած շարժումը ի վեր կը հանէր թարմ ու սարսռուն տարփանք մը, երբ թէ քսան տարեկանին մէջ ըլլար։

—Ա՛հ, վերջապէ՛ս եկար, Բլօտիա։

—Զգուշացէ՛ք, ըսաւ մանկամարդ կինը, մէկ մատը շրթունքներուն տանելով։

—Օ՛հ, ո՞վ կրնայ մեզ լսել այս փառաւոր շէնքին մէջ, որոնք բերդի դռներ ու պատուհաններ ունին։ Նախ ֆրանսերէն խօսինք։

—Իմ անունս իտալական է։

—Գիտեմ այդպէս ըլլալը։ Դժբախտաբար հոգիդ ալ իտալական է։

—Օ՛հ, ատիկա ձեր իմացականութեան չվայլող խօսք մըն է, ըսաւ Բլօտիա ծիծաղելով։

—Ինչո՞ւ համար։

—Ծագումներու՝ վրայ եղած ընդհանուր խօսքեր են ատոնք։ Ամէն մարդ իր արժէքն ունի և ինքնութիւն մը կը կազմէ։

—Ներեցէք, յարեց Մաքսիմ, իւրաքանչիւրին նկարագիրը կախում ունի իր նախահայրերէն, միջավայրէն ու ցեղէն։

—Իմաստասիրե՛նք, ըսաւ իշխանուհին նստելով և զուարթութիւն ձեւացնելով, ուր քիչ մը արհամարանք կար։

—Ատոր համար չէ որ հոս եկած եմ, պատասխանեց Մաքսիմ, որուն դէմքը խիստ արտայայտութիւն մը առաւ։

Բլօտիա չխտակի նայեցաւ կոմսին երեսը, յետոյ յամրօրէն ըսաւ.

—Ստուգիւ պէտք ունիք բացատրութիւն տալու թէ ինչո՛ւ համար հոս եկած էք։ Գիտէք թէ պաշտօնական հանգամանքով միայն կը նախընտրեմ ձեզ ընդունիլ։

—Կը վախնաք որ ձեր պատիւը կը վտանգէ՞մ, հարցուց կոմսը այնպիսի հեգնութեամբ մը որ նախատական ըլլալ կը թուէր։

—Օ՛հ, բնաւ երբեք, պատասխանեց Բլօտիա, մեղմանոյշ ժպիտով մը, թէեւ ամէնէն բուռն խօսքերն ըսէր։ Իմ պատիւս վտանգե՛լ կը կարծէք, սա պատճառաւ որ իմ սիրահարս կը նկատեն ձեզ... Ամբողջ Հռոմ կը կասկածի թէ ատենօք սիրահարս եղած էք։

—Ու մինչեւ հիմա եմ տակաւին, ըսաւ կոմսը հաստատական ժպիտով մը։

—Ինչ բանի վրայ կը հիմնէք այդ իրողութիւնը, հարցուց Բլօտիա անայլայլ ձայնով։

Ապշութենէն իր տեղը գամուած, չպատասխանեց կոմսը։ Բլօտիա յարեց.

—Փոյթս չէ թէ մեր նախկին մտերմութեան աստիճանը ճշդեն, որ տհաճութիւն կը պատճառէ այսօր, և ոչ ալ ենթադրեն թէ տակաւին գոյութիւն ունի այդ մտերմութիւնը, թէեւ անհետացած ըլլայ։ Ինչ որ անտանելի կը թուի ինծի՝ սա կարծիքն է թէ Թրանի իշխանուհին անխորհուրդ աղջնակի մը պէս կը շարժի, իբր ընելիքը չի գիտեր, և կը թոյլատրէ որ աշխարհի վրայ մէկը առանց քաշուելու տեսնուի իր հետ, թէեւ հազար անգամ սիրուհին եղած ըլլայ անոր։

—Առանց քաշուելո՞ւ վարուած կ'ըլլամ ձեզի հետ, այցելութիւն տալով։

—Այո՛, իմ թոյլատրած ժամէս և օրէս դուրս այցելելով։

—Եթէ երբեք ձեր հրամաններուն չեմ անսար, Բլօտիա, պատճառը սա է որ հոս միայն կրնամ մասնաւոր տեսակցութիւն մը ունենալ ձեզի հետ։ Գիտէք թէ ո՛րքան ատենէ ի վեր չէք եկած Սալպիաքոյի մեր հովասուն վիլլան։

—Բաւական ատենէ ի վեր, և ահ ալ ձեզի հարցնելու համար թէ ի՛նչ բանի վրայ կը հիմնէք իմ սիրահարս ըլլալու ձեր յաւակնութիւնը, ինչպէս հարցուցի քիչ մը առաջ։

—Բլօտիա՛...

Այդ ճիչին մէջ ամէն բան կար. զայրոյթ, տառապանք, սէր։ Կոմսին անհուն տարփանքը այնքան ուժգնօրէն ի յայտ եկաւ այդ բացագանչութեան մէջ որ բան մը չունեցաւ ըսելիք։

Կոմսը լուռ կը դիտէր իշխանուհին։

Բլօտիա հանդարտ նայուածք մը ուղղեց, ուր անդառնալի որոշում մը կը կարդացուէր։

Կոմսը միշտ պաշտելի կը գտնէր Բլօտիան՝ իր նրբութեանը, սարսռուն մարմնին, մութ երանգին համար, երբ թէ քսանհինգ տարեկան եղած ըլլար, երբ առաջին անգամ վայելած էր զանի։ Որովհետեւ հիմա այն ատենէն աւելի կը սիրէր Բլօտիան։

Մանկամարդ կինը կը տեսնէր որ կոմսին քունքերը ճերմկած էին տարիքոտ մարդոց պէս, անոր աչքերը, երբեմն այնքան զուարթ ու կրակոտ, քիչ մը չիջած էին նուազ պիրկ արտեւանունքներու միջեւ, շրթունքները չորցած ու թարշամած, ծալք մը կը կրէին իրենց վրայ, արդինք սիկառի յաճախակի գործածութեամբ դեղնցած պեխերուն տակ։

Բլօտիա չէր կրնար երեւակայել որ երբեմնի սիրային գգուանքները պիտի վայելէ այդ մարդուն բազկացը մէջ։

Կոմսը դիտած ատեն կը խորհէր թէ վերջացած էր այդ բանը։

Մաքսիմ տ'Էրքիւանսիի պատրանքը փարատեցաւ, մանկամարդ կնոջ աչքերուն մէջ կարդալով, ուր նախկին սէրը տեսակ մը յարձակողական քինախնդրութեան կը փոխուէր։

Ուստի մրմնջեց.

—Բլօտիա, մի դիմադրէք։ Գիտէք թէ ինչեր ընելու կարող եմ, երբ զիս կը խաբեն։

—Ձեզ խաբելու համար, սիրելիս, նախ ձեր սիրուհին ըլլալու է։

Կոմսը դեփ դեղին կտրեցաւ։ Իր սպառնալիքը, քիչ մը առաջ հազիւ բառերով արտայայտուած, ահռելիօրէն ի յայտ եկաւ աչքերուն և ամբողջ դէմքին վրայ։ Կափկափող ակռաները կարծես սպանութեան խօսքեր կ'ընէին, զորս կը զսպէր։

—Անօգուտ է ինծի յիշեցնելը թէ ձեր կնոջ սիրահարը սպաննած էք, ըսաւ իշխանուհին իր պաղարիւն յանդգնութեամբ։ Գիտեմ այդպէս ըլլալը, և պատճառներ ալ ունիմ գիտնալու։

—Ինչ սատանայ ես... Ջէնքը դուն դրիր ձեռքիս մէջ։ Իտալուհիի խորամանկութիւններովդ, լռութիւններովդ ու ծառաներովդ յաջողեցար անոնց սիրային յարաբերութեան բովանդակ գաղտնիքը և ժամադրավայրը հասկնալ, յետոյ ինծի հաղորդելու համար։ Իմ վիրաւորուած արժանապատուութիւնս գրգռեցիր... Մոլեգին ու խելայեղ մարդ մը դարձուցիր զիս... Ես ալ կուրօրէն կարծեցի թէ կնոջմէս կը նախանձէիր, զիս սիրելուդ համար...

(Շարունակելի)

«բայց, յաւաւել կամօք խմոյք հասան
«եղեալ հանեցայ՝ ոգւով չափ աշխատա-
«սիրել զի միշտ և յաւիտեան հաստա-
«տուն մնասցէ, վասնորոյ կնքեալ ստո-
«րագրեցի։» (ԿՑԻՔ)

Վերոգրեալ յիշատակութիւններէն յայտնի կ'ըլլայ ուրեմն որ ՌՄԼԸէն այսինքն 1789ին Ապուչեխցի հանգուցեալ խանըմի որդին Մահտեսի Յոհաննէս ամիրայ, Նարլը Գաբուի հիւանդանոցին կից ունեցած իր քերէստէճիի խանութը հիւանդանոցին կը նուիրէ, որպէս զի խանութին վրայի սենեակները հիւանդանոցի նեղկուկ վիճակին ընդարձակման ծառայեն, և եկամուտն ալ հոն ապաստանածներուն մաքրութեան ու սննդեանն յատկացուի։

Դուք, Տէր Հայր, կարծեմ թէ սխալ ընթերցանութեամբ մը, այս 1789 թուականը 1781 գրած էք և ըստ այնմ կ'ենթադրէք թէ հիւանդանոցին ամբողջ նորոգութիւնը տեւած ըլլայ 1781-82։

Ներեցէ՛ք ինձ ըսել թէ վերոյիշեալ թուականը կը ջրէ ձեր այս ենթադրութիւնը, և գրուածներն ալ ցոյց կուտան պարզապէս թէ 1789ին եղածը հիւանդանոցին ամբողջական նորոգութիւնը չէր, այլ մասնակի յաւելուածի մը շինութիւնը, որով՝ պատճառ մը չեմ տեսներ չընդունելու Սարգիս Դպրին ըսածը՝ թէ՝

Այս վասն գոլոյն հին եւ խախուտ, բազում ծախիւք նորոգ շինեցին զնա ի հիմանէ մեծ եւ ընդարձակ ըստ ամենայն պիտոյից ի թուականին ՌՄԽԳ (1243+551=1794)։

Ազատ էք, Տէր Հայր, չընդունելու այս իրողութիւնը և կարծելու թէ ըսածներս և խօսածներս բոլորն ալ պարզ ենթադրութիւններ են. ահա յիշատակարանները, ահա ըսածներուս աղբիւրը, ջնջեցէ՛ք զանոնք և ջնջեցէք եթէ կարող էք, և պիտի հաւատամ ձեզ։

Այսչափ ահա ձեր դիտողութեանց առաջին մասին համար. աւելի մանրամասնութիւններ յարմար պարագայի մը վերապահելով, ներեցէ՛ք ինձ դիտել տալ ձեզ թէ Արեւելքի 6521 թիւին մէջ ուղղել ուզած բառերնիդ՝ «զբաղանիս»ը զոր զբազումս կարդալ կը յանձնարարէք, «Ի ԲԱՂԱՆԻՍ» պէտք է ըլլայ, որովհետեւ հրատարակուած վաւերագրէն յայտնի է թէ կտակարար Յովհաննէս Ամիրային կամքն՝ է որ հիւանդանոցին խեղճ պատսպարեալները տարին երկու անգամ բաղնիք ղրկուին. հետեւաբար ձեր առաջին գրածը ճիշդ է։ Թողլով ուրեմն Նարլըգաբուի հիւանդանոցը, անցնինք Բերային դիտելու։

Ձերդ
ՏՕՔԹ. Վ. Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

Բերա 25 յունիս 1907

## ԼԵԶՈՒԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

### ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐՈՒ ՍԽԱԼ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Արեւելքի 6499 թիւով, Զարեհ էֆ. Թորոսեան, մեր հրատարակած լեզուական նախորդ տեսութեանց համամիտ ըլլալը յայտնելէ և իր կարգին անոնց ոյժ տալէ յետոյ, յիշուած գաւառական բազմաթիւ բառերէն երեքին մասին կ'ուզէ դիտել տալ թէ՝

1.—Շուլլուխ=Բռնելով, մկանունքի ոյժով, առանց նեցուկի, պատէ մը կամ ծառէ մը վեր բարձրանալ։

2.—Շուլյալ չ'նշանակեր խոշոր կար, անոր սեփական բառն է բռքել։

3.—Հովփիել=Հովին դէմ դնել լաթ կամ ո և է բան. օդ տալ։ Հովփիփ=Ինքզինք հովին տալ, հովին դէմ կենալ, հով առնել։

Զ. Թորոսեան էֆ. մոռնալ կը թուի թէ խնդիրը գաւառական բառերու վրայ է հոս, որոնց ճշգրիտ նշանակութիւնը գրելէ առաջ, երկար տարիներ, լսած ու խօսած ենք զանոնք, անձամբ թափանցելով զանազան գաւառաբարբառներու առանձնայատկութեանց։

Ուստի թո՛ղ ներէ որ չնշեմ թէ՝

Ա.—Բացարձակապէս սխալ և անհիմն է վեր բարձրանալու ո՛ր և է իմաստ վերագրել Շուլլուխ բառին։ Շուլլուխ՝ կը նշանակէ մի մի [illegible] խուրխ, բալուխ (ասեղը, փուշը կամ նման սուր սրածայր առարկայ մը) Շուլլել և Շուլալ (և ո՛չ Շուլյալ) բառերուն խուլելու և կարելու երկնակ նշանակութիւններն ալ, իրենց կարգին, կ'ապացուցանեն թէ՝ Շուլլուխ ո՛ր և է գործ չունի վեր բարձրանալուն հետ։

Իսկ առանց նեցուկի, քսուելով ու մկանունքի ոյժով, ծառէ մը վեր բարձրանալ նշանակող՝ ուրոյն բառը կա՛յ արդէն գաւառաբարբառին մէջ,— Շպխկուխ, զոր պէտք չէ՛ շփոթել Շուլլուխին հետ։

Բ.—Շուլալ՝ կը նշանակէ խոշոր, նաւռեւանցի կար, Բզիլի գաւառաբարբառին մէջ։ Ասոր արգելք չի կրնար ըլլալ Զ. Թորոսեան էֆ.ի Բռքել, որ լսուած չէ մնաւ, և որ տարբեր գաւառաբարբառի մը մէջ՝ Շուլալին հոմանիշն է թերեւս։

Գ.—Հովթիփ=Հովին թափիլ (տերեւները)։—Տերեւաթափի՝ յատուկ է սոյն նշանակին միայն, ուր աշնան տերեւները կը թափին ինքնին կամ թեթեւ զեփիւռներէն իսկ։ Հովփիփ կը տարբերի ասկէ, զի կը նշանակէ, ո՛ր եւ է ատեն տերեւներուն թափիլը՝ բուռն հովի մը ուժգնութենէն։ Հովփիփի և հովփիելի՝ ինքզինք հովին տալ, հովին դէմ կենալ, հով առնել, հովին դէմ դնել, (յաջ ևն.) օդ տալ վերագրուած իմաստները գոյութիւն չունին մեր ծանօթ՝ Բլին, Կարնոյ, Խարբերդի, Տիարպէքիրի, Երզնկայի, Բերրիի ևն. գաւառաբարբառներուն մէջ։

Հովանրել. հովանրիլ ծանօթ բառն է որ կը համապատասխանէ այդ նշանակութեանց, և այս՝ պէտք չէ շփոթել հովփիփել-ին հետ։

⁂ Զ. Թորոսեան էֆ. ձայնակցելով մեր քննադատութեան, լեզուի ճշգրտութեան խնդիրն՝ Ռուսահայկան Խորհրդոյ ուշադրութեան կը յանձնէ իրաւամբ։ Այո՛, Ռուսահայկան Խորհուրդը կըրնայ, և պէտք է որ չվաւերացնէ սխալաշատ, թափթփած դասագրքերը. Թէև կարեւոր, այլ մասնակի միջոց մըն է այս։ Միեւնոյն ատեն, ունենալու ենք ուսուցիչներ՝ որ կրնան դէթ զանազանել ճշգրիտը սխալէն, վաւերացնողն անվաւերէն ու չգործածելու այս վերջիններըս։ Մամուլն ալ, խիստ ուղղութեամբ, կրնայ զերծ մնալ այդ վարակումէն և միեւնոյն ժամանակ, օրը օրին քննադատել թէ՛ աշխարհաբարի և թէ՛ գաւառաբարբառի դէմ գործուած մեղանչումները, որոնք աններելի՛ են։

Բերրի ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ

## ԱՌՈՂՋԻՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Ծովու լոգանքի տասը գիտելիքներ.— 1. Հոգեկան յուզումներէ ետքը ջուրը մի՛ մտներ։— 2. Երբ ինքզինքդ տկար զգաս, և կամ տեւական անհանգստութիւն մը ունենաս, ջուրը մի՛ մտներ։— 3. Երբ գիշերը անքուն անցունես կամ չափազանց աշխատիս, չըլլայ որ ջուրը մտնես, առանց քանի մը ժամ հանգստանալու։— 4. Կշտապինդ ուտելէ և ոգելից ըմպելիք խմելէ ետքը ջուրը մի մտներ։— 5. Լոգնալու գացած ատենդ ծանր քալէ։— 6. Եւ հոն հասնելուդ պէս, ջուրին բարեխառնութեան, խորութեան և յորձանքին վրայ տեղեկութիւն առ։— 7. Ծանր ծանր հանուէ՛, բայց շուտով մտիր ջուրին մէջ։— 8. Գլխու կողմէն ջուրը նետուէ՛, եթէ ոչ շուտ մտիր ջուրին մէջ։— 9. Ջուրին մէջ շատ մի՛ կենար, մանաւանդ՝ եթէ այնչափ զօրաւոր չես։— 10. Ջուրէն ելլելէդ ետքը լաւ մը շփէ մարմինդ՝ արեան շրջաբերութեան համար. շուտով հագուէ և չափաւոր շարժումներ ըրէ։

Պաղ ջուրով լուացմունք պէտք է առաւօտուն անկողնէ ելլելու պէս, այսինքն ա՛յն ատեն տեղի ունենան երբ մարմինը դեռ կորսնցուցած չէ անկողնոյ ջերմութիւնը։ Մարմինը որչափ տկար ըլլայ, ջուրին բարեխառնութիւնն ալ այնչափ բարձր ըլլալու է, և ընդհակառակը ջուրը այնչափ պաղ՝ որչափ զօրաւոր ըլլայ մարմինը։ Լուացումէ ետք մարմինը թեթեւ իմն չորցունելով, մորթ դեռ խոնաւ վիճակի մէջ, հագուելու և ժիր շարժումներ ընելու է մինչեւ որ մարմինը տաքնայ, և կամ՝ վերստին անկողին մտնելով պառկելու է մինչեւ որ մարմինը չորնայ և տաքնայ։ Մարմինը տկար կամ ոչ-առողջ եղած ատեն պաղ ջուրի մէջ լոգնալը կամ լուացուիլը բացարձակապէս վնասակար է և ծանր հետեւանքներու պատճառ կրնայ ըլլալ։ Այս պարագան ուշադրութեան առնելով, ծովու լոգանքի համար ալ նախամեծար է, փոխանակ առաւօտուն ծովի պաղ ջուրին մէջ լոգնալու, միջօրէէն ետք կամ իրիկուան դէմ ծով մտնել, երբ ծովու ջուրին պաղը արեւու ջերմութենէն կոտրած ըլլալով թէ՛ հաճելի ներգործութիւն մը կ'ընէ մարմնոյն վրայ և թէ առիթ չտար ֆիզիքական աղետաբեր հետեւանքներու։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԼԱ ՀԷՅԻ ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴԸ

Լա Հէյի Դեսպանախորհուրդին ամէնէն ազդեցիկ պատուիրակներէն մէկը, Ֆրանսա՛յի պատուիրակներուն ընթացքին և կատարած դերին նկատմամբ, սա յայտարարութիւնը ըրած է Հանտէլսպլատի խմբագիրներէն մէկուն.

«Պէտք չէ աչքէ վրիպեցնել թէ երկրորդ Դեսպանախորհուրդը առաջինէն բոլորովին տարբեր է։ Առաջինը դիւանագիտական ժողով մըն էր, մինչդեռ երկրորդը խորհրդարան մըն է։ Իրաւաբարութեան յանձնաժողովէն զատ, միւս երեքը խորհրդարանական մասնագիտական յանձնաժողովներ են, և 90էն 100 հոգիի այդ գումարումներուն մէջ կարելի է հազիւ քսան հոգի կայ որոնք ձեռնհասութիւն ունենան միջազգային իրաւաբանութեան մասին։ Ուրեմն անհրաժեշտ է որ առաջին Դեսպանախորհուրդին մասնակցողները իւրաքանչիւր խնդրոյ համար ճշմարիտ հրապարակախօսութիւն մը կատարեն՝ իրենց պաշտօնակիցները լուսաբանելու համար։ Այդ է պատճառը Պ. Պ. Պուրժուայի և Ռընոյի նման մարդոց, ինչպէս նաեւ ֆրանսական պատուիրակութեան կողմէ կատարուած միջնորդի դերին։ Ֆրանսա առաջարկութիւններ ներկայացուց. կարելի է ուրիշներ ալ ներկայացնէ, բայց ատոնց ընդունելութիւնը իրեն համար արժանապատուութեան խնդիր մը չըներ. տրամադիր է իւրաքանչիւր առաջարկութեան օգտակար մասերը առնել և անոնց մասին բարւոքումներ առաջարկել։ Այդ կերպով է որ Ֆրանսա համամիտ գտնուած է Գերմանիոյ առաջարկութեան՝ գրաւման ատեաններին խնդրոյն նկատմամբ։ Ֆրանսա, իր դաշնագրութեանց և բարեկամութեանց հետեւանքով, միջնորդի դեր կը կատարէ Պետութեանց միջեւ, որոնք կը պաշտպանեն զուտ ցամաքային շահերը և ծովային տէրութիւնները։ Ուրեմն անոր ընելիքը պիտի ըլլայ մէկ կողմէ աշխատիլ արդէն գոյութիւն ունեցող պայմանագրութեանց տարածմանը ու բարւոքմանը և միւս կողմէ ալ ընդունելի ամէն տեսակ իրաւախոհութիւններ թելադրել։ Ուստի կարեւոր ամէն խնդիրներու մէջ ֆրանսական առաջարկութիւնը ոչ թէ կարծեաց փոխանակութեան իբրեւ հիմ պիտի ծառայէ, այլ անշուշտ ամբողջութեամբ պիտի ընդունուի։»

— Ռուսական պատուիրակութիւնը սա առաջարկութիւնը ներկայացուց.

«Երբ տասը երկիրներ, որոնց կէսը առնուազն քսանհինգ միլիոն բնակիչ ունենան, համաձայնին իրենց վէճերը իրաւարարութեան ներկայացնելու, պիտի կրնան դաշնագրութիւն մը կազմել՝ միւս երկիրներուն կռիւները և անհամաձայնութիւնները ջնջելու նպատակով, և միջամտել ամէնէն արդար լուծումին համար։ Այդ երկիրները պիտի կրնան նաեւ պարտաւորիչ իրաւարարութեան միայն դատարան մը հաստատել Լա Հէյ մէջ կամ ուրիշ տեղ մը, եթէ Հոլանտա չմասնակցի այդ դաշնագրութեան։ Այդ դաշնագրութիւնը, որ պարտաւորիչ իրաւարարութեան նպաստաւոր պիտի ըլլայ, միջազգային վէճերու համար միայն պիտի միջամտէ. որ և է երկրի ներքին գործերուն բնաւ պիտի չխառնուի։ Պարտաւորիչ իրաւարարութեան համակրող բոլոր ազգերը պիտի կրնան այդ դաշնագրութեան մասնակցիլ։»

### ՖՐԱՆՍԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Բեդերսպուրկէն հետեւեալ հեռագիրը ուղղած է Բարիզի թերթի մը թղթակիցը.

Նովոյէ Վրէմիա երկար նամակ մը կը հրատարակէ ֆրանքօ-ռուս դաշնագրութեան մասին։ Պանսլաւիստական այդ թերթը ցարդ մեծ համակրութիւն մը ցոյց չէ տուած Ֆրանսայի. Այսուհանդերձ ցաւալի է տեսնել որ այդքան կարեւորութիւն ունեցող թերթ մը կը հիւրընկալէ նամակ մը, ուր այնքան նուազ խորհրդարանական լեզուով մը կը խօսուի դաշնակից տէրութեան մը վրայ։ Նամակին հեղինակը նախ կը յիշեցնէ դաշնագրութեան սկզբնաւորութիւնը, որ կնքուեցաւ այն պահուն երբ Ֆրանսա բոլորովին մեկուսացած էր, որով այդ դաշնագրութիւնը անմիջական առաւելութիւններ ընծայեց նոյն երկրին։ Նամակը յետոյ կ'ըսէ թէ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւնները այնքան սիրալիր չեն՝ հիմա իշխանութեան վրայ գտնուող մարդոց կարճատես քաղաքականութեանը հետեւանքով։ Ապա նամակը կը քննէ սա կէտը թէ Ռուսիա ի՛նչ պահանջելու իրաւունք ունէր իր դաշնակիցէն. կ'ուզէր որ զօրաւոր ըլլայ՝ ինչ տեսակ մարդեր ալ որ իշխանութեան վրայ գտնուին, վասն զի ռուս կառավարութիւնը պէտք մը չունի գիտնալու թէ իր դրացիներուն քաղաքականութիւնը ի՛նչ տեսակ մարդեր կը վարեն. կ'ուզէ որ Ֆրանսա ալ միեւնոյն բանը ընէ և բացարձակապէս համակրութիւն չյայտնէ ընդդիմադիրներուն. Նամակը կը յարէ.

«Ռուսիա միթէ բաւական զօրաւոր գտա՞ւ իր դաշնակիցը։ Ոչ, վասն զի Ֆրանսայի զինուորական կազմակերպութիւնը վստահելի բան մը չէ։ Անտրէ զօրավարը և Պ. Բէլըդան կազմալուծեցին բանակը ու նաւատորմը։ Բիքառ զօրավարն ալ նոյն բանը կը շարունակէ, 1903-1904ին գրուած զինուորներուն արձակումէն ետքը բանակը 142,000 հոգիէ պիտի բաղկանայ։ Մնացած գործը հակազինուորականութիւնը կը տեսնէ։»

Նամակագիրը յետոյ սա եզրակացութեան կը յանգի.

«Ֆրանսայի իրաց ներկայ կացութիւնը նկատողութեան առնելով, խնդիր է գիտնալ թէ ֆրանքօ-ռուս դաշնագրութիւնը առաւելութիւն մը ունի՞ Ռուսիոյ համար, կամ թէ ժամանակը անցա՞ծ է և միթէ հարկ չէ՞ որ Ռուսիա, իր շահերը պաշտպանելու համար, քաղաքական ուրիշ կարգադրութեամբ մը զբաղի։ Ֆրանսայէն դրամ փոխ առնելովը Ռուսիա ծառայութիւն մատոյց Ֆրանսայի։ Եթէ վաղը Ռուսիա վերադարձնէ Ֆրանսայի միլիառները, Ֆրանսա մեծապէս պիտի չուարի։»

### ԳԵՐՄԱՆԻԱ

Լաֆֆան Գործակալութեան մէկ հեռագիրը, Քոբէնհակէն ստացուած, կ'ըսէ.

—Ուրբաթ օրը Վիլհէլմ կայսրը պտոյտ մը կատարեց Ֆրէտէնսպորկի դարաստանին մէջ՝ Տանիմարքայի թագաւորին անդրանիկ որդւոյն և արքայական գերդաստանի միւս անդամներէն չորսին հետ։ Հետեւորդներէն մէկը իմացեր է Վիլհէլմ կայսեր խօսակցութիւնը, որուն առարկան էր ճափոնական ազգը։ Վիլհէլմ Բ. որ ոգեւորեալ կը խօսէր, ըսեր է թէ չէ եղած սպիտակամորթ ազգ մը որ Անգլիոյ պէս մեծ սխալ մը գործած ըլլայ՝ Ճափոնի հետ դաշնակցելով։ Վիլհէլմ Բ. յարեր է թէ Եւրոպացիները մեծ պակասութիւն մը կը գործեն թող տալով որ դեղին ցեղը նմանողը ըլլայ իրենց թերութիւններուն։

—Հոհենցոլլերն և ուրիշ զբօսանաւ մը վրայ Վիլհէլմ կայսեր ու Պ. Էթիէնի տեսակցութեանը պահուն Պ. Էթիէն, էթիքէթի պահանջմանց համաձայն, բրուսիական կապոյտ սմօքինկ կը կրէր՝ ոսկէ կոճակներով։ Պ. Էթիէն իր մէկ քանի բարեկամներուն սա յայտարարութիւնը ըրաւ.

—«Սքանչացայ կայսեր ունեցած պաշարով, լիակատար ու բազմաճիւղ տեղեկութեանց վրայ։ Զարմացումս չափ չունեցաւ, երբ յիշեց իմ աշխատութիւններս, ճառերս, նախարար անուանուելուս և հրաժարելուս թուականները և ուրիշ կարգ մը մանրամասնութիւնները զորս ես իսկ մոռցած էի։ Այսքան ճշգրութեան առջեւ հիացումս յայտնեցի. Կայսրը պատասխանեց թէ միթէ ատոնք պատմութեան վերաբերող իրողութիւններ չե՞ն։»

### ԱՆԳԼԻԱ

### ԵՒ Պ. ԷԹԻԷՆԻ ՊԵՐԼԻՆ ՈՒՂԵՒՈՐԻԼԸ

Բէլ Մէլ Կազէթ պահպանողական լրագիրը սա գրութիւնն ընդունէր է դիւանագիտական շրջանակէ.— «Ամէն ոք Պ. Էթիէնի Պերլին երթալուն և այդ ուղեւորութեան կարեւորութեան վրայ կը խօսի այժմ։ Զարմանալի չէ երբ գիտնալ ուզուի թէ Մեծն Բրիտանիա ի՞նչպէս կը վերաբերի այդ ուղեւորութեան և Ֆրանսայի մէջ հանրային կարծիքի գոյացման։ Մեծն Բրիտանիա հաշտ աչքով կը նայի Գերմանիոյ և Ֆրանսայի միջեւ լաւագոյն համաձայնութիւն յառաջ բերելու նպատակով եղած ո և է փորձի։ Անգլիա վստահ է թէ ինչպէս որ ֆրանքօ-ռուս բարեկամութիւնը սատարեց Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ ծագած վէճերուն կարգադրութեան, այնպէս ալ Գերմանիոյ հետ Ֆրանսայի բարեկամական սերտ յարաբերութիւնները կրնան ամրացնել անգլեւ-գերման բարեկամութիւնը։ Թերեւս առարկուի թէ ատոնք դիւանագիտական քաղաքավարութեան յատուկ խօսքեր են, բայց ընդհանուր համոզումն այն է որ այսպիսի հայեացք մը դիւանագիտական նոր ձեռնարկութեան մը թելադրիչը կրնայ ըլլալ՝ այսինքն ձեռնարկ մը որ ցամաքային Եւրոպայի կարեւոր շրջանակներու մէջ ալ նկատողութեան կ'առնուի»։

—Լոնտոնի օտար դեսպաններէն կարեւոր անձնաւորութիւն մըն ալ հետեւեալը ըսած է Նոյէ Ֆրայէ Բրէսսէի Լոնտոնի թղթակցին.— «Ընդհանուրին կարծիքն այն է թէ Ֆրանսայի կամ Անգլիոյ և ուրիշ տէրութեանց միջեւ կնքուած ամէն դաշնագիր նպատակ ունին չէզոքացնել Գերմանիան տէրութեանց խմբումին մէջ։ Տէրութեանց այս խմբումը, բացարձակապէս հին քաղաքականութեան համեմատ կը դատեն Գերմանիոյ մէջ, առանց, սակայն, դիտելու թէ տէրութեանց այս խմբաւորումը որչափ մեծ ազդեցութիւն ունի ընդհանուր խաղաղութեան երաշխաւորութեան վրայ, որուն համար Գերմանիա եւս կրնայ մասնակցիլ գերազանցապէս։ Ասոր ապացոյցն ալ սա՛ է որ նախ Ռուսիա և հիմակ ալ Գերմանիա ձեռնարկեցին մէկզի ընել խաղաղութեան ճամբուն վրայ գտնուած արգելք կամ խնդիր, որոնք կրնային եւրոպական ո և է տէրութեան պատճառ ըլլալ խաղաղութիւնը խզելու։ Ինչպէս կը տեսնենք, Գերմանիա թէ՛ Անգլիոյ և թէ Ֆրանսայի հետ իրաւախոհութեան մտնելու համար կէս ճամբուն կէսն առած է արդէն։ Խաղաղասէր պատգամաւորութիւններ Անգլիայէ Գերմանիա գացին ու վերադարձան։ Գերման կայսրը հաճեցաւ մասնաւոր ընդունելութիւն մը ընել Ֆրանսայի նշանաւոր դիւանագէտին։ Վիլհէլմ կայսրն ալ մտադիր է Անգլիա այցելել և Անգլիա կը պատրաստուի փառաւոր ընդունելութիւն մը ընել անոր։»

### ՔՐՈՋԸ ՊԱՏԻՒԸ

Ուրբաթ օրը, վճիռին ժամը մօտեցած ըլլալով, ունկնդիրներուն թիւը խիստ ստուար է։ Նըբանցքներուն մէջ, առտուն կանուխ, երեք հազար հոգիէ աւելի բազմութիւն մը կը սպասէր. դատասրահը բոլորովին լեցուած էր։ Անձնական դատախազին կողմէ ամբաստանեալին փաստաբաններուն պաշտպանողականին տրուած պատասխանէն ետքը, խօսեցաւ ընդհանուր դատախազը, որ օրէնքին կիրառումը պահանջեց. անոր «թէզ»ը կանխամտածութեան ոյժ կուտար և միեւնոյն ատեն օրինական արդարացումը կ'ընդունէր։ Ամբաստանեալին փաստաբաններէն Պ. Բոլ Լէֆիլ Ժանսօն պատասխանեց ընդհանուր դատախազին և ըսաւ.

«Եթէ Պալմաչէտա չմեռնէր և վէրքերը բուժուէին և հոս վկայութիւն տալու եկած ըլլար, դատապարտութիւն պիտի չպահանջէր, այլ երդուեալներուն դառնալով պիտի ըսէր.— «Ես անոնց քո՛յրը ձեռքերնուն առի, դուք ալ իրենց եղբայրը վերադարձուցէք»։

Ամբաստանեալին միւս փաստաբանը՝ Պ. Հիւզման ալ ըսաւ.

«Քարլոս Ուատինկըզըն անդիմադրելի զօրութեան մը հպատակեցաւ. ես ալ կոչում կ'ընեմ երդուեալներուն խիղճին և կը հարցնեմ թէ միթէ պիտի ուզէ՞ին խղճի խայթը ունենալ դատապարտած ըլլալու այս դժբախտը, որ արդէն ա՛յնքան տառապած է։»

Ատեանին նախագահը երդուեալներուն բացատրեց ընելիքնին և սա հարցումները ըրաւ անոնց.—

Ա. Քարլոս Ուատինկըզըն յանցաւո՞ր է կամովին սպանութիւն մը գործած ըլլալուն համար Էրնէսթօ Պալմաչէտայի անձին վրայ՝ մահ պատճառելու դիտաւորութեամբ։ Բ. Կամովին մարդասպանութիւնը կանխամտածութեամբ մը գործուած է։ Գ. Հաստատուա՞ծ է որ առաջին հարցումին մէջ յիշուած կամովին մարդասպանութիւնը ծանրակշիռ բռնութիւններով է՛ անձերու հանդէպ։

Երդուեալները ժամ 4.15ին խորհրդակցութեան սենեակը գացին և կէս ժամ ետքը վերադարձան։ Ամբողջ սրահը շնչասպառ կը սպասէր։ Քարլոս Ուատինկըզըն, տժգոյն, ձեռքը վանդակորմին եզերքը զալարած, մեծ անհամբերութեամբ կը սպասէր։ Երբ իմացուեցաւ որ Քարլոս Ուատինկըզըն անպարտ արձակուած է, ընդհանուր ուրախութիւն մը տիրեց։ Քարլոս Ուատինկըզըն վստահելից դէմքով մը երդուեալներուն կը նայէր և գլխի խոնարհումով մը ըրաւ իբրեւ երախտագիտութեան նշան։ Ատեանը վճռեց որ անձնական դատախազները մէկ ֆր. հատուցում ստանան։ Երբ Քարլոս Ուատինկըզըն դատասրահէն դուրս կ'ելլէր, ներկաները համակրական արտայայտութիւններ ըրին և նոյն իսկ գեղեցիկ սեռին պատկանողները զայն ողջագուրեցին անկեղծօրէն։ Վճիռը ընդհանուր գոհացում պատճառեց Պրիւսէլի մէջ։ Ուատինկըզըն ընտանիքը Պրիւսէլ պիտի չմնայ և Լոնտոն պիտի երթայ՝ իբրեւ Չիլիի կողմէ ընդհանուր պատուիրակ գաղթականութեան համար։ Զրոյց ելաւ թէ Պալմաչէտայի հայրը Պրիւսէլ ժամանած է՝ իր զաւկին վրէժը լուծելու։

### ՀԱՐԻՒՐ ԵՐԵՍՈՒՆՄԷԿ ՏԱՐԵԿԱՆ

Բին-Հիլըմ մէջ (Թէքսաս, Մ. Նահանգները) Կիլքրիզ անուն կին մը տօնեց իր ծննդեան 131րդ տարեդարձը. Վաւերական գրութեանց նայելով, այդ կինը 1776 յունիս 16ին ծնած է Սալէմի մէջ (Մասաչուսէթ)։ Հարիւրամեան դեռ, առանց ուրիշին աջակցութեանը, կրնայ քալել և իր տանը մօտերը փոքր պտոյտներ կատարել։ Դժբախտաբար շատ աղքատ է. իր աղջիկը, որ մէկ քանի ամիսէն հարիւր տարեկան պիտի ըլլայ, հարուստ մը չէ, որով չի կրնար օգնել իր մօրը, սակայն տեղւոյն բնակիչները, որոնք կը պարծենան հարիւրամեայ մը ունենալնուն համար, թէ՛ մօրը և թէ աղջկան ամէն կերպով կ'օգնեն։ Տիկին Կիլքրիզ իր քովը կը պահէ իր թոռանը աղջիկը, որ ութ տարեկան է և կայտառ։ Բազմաթիւ անձեր շնորհաւորելու գացած էին Տիկին Կիլքրիզի 131րդ տարեդարձը և բարեմաղթութիւններ ըրին։ Հարիւրամեան յայտարարեց թէ տակաւին կը յուսար երկար ատեն ապրիլ՝ ներկայ գտնուելու իր թոռան աղջկանը ամուսնութեանը։

### ՆԵԼՍԸՆԻ ՄԷԿ ՁԵՌԱԳԻՐԸ

Վերջերս մեծանուն ծովակալ Նէլսընի մէկ ձեռագիրը վաճառուեցաւ, այն հրամանագիրը զոր Թրաֆալկարի պատերազմին նախընթաց օրը ծովակալը ուղղած էր նաւատորմին սպաներուն և նաւաստիներուն։ Սոյն ձեռագիրը 75,000 ֆրանքի գնուեցաւ։ Ահաւասիկ պատմութիւնը.—Լոնտոնի մէջ օմնիպիւսի ծեր կառապան մը, ուղեւորի մը հետ խօսակցութեան մտնելով՝ ինչպէս կը պատահի [illegible], պատմեց թէ իր հայրը Վիքթորիա մարտանաւին մէջ նաւազ մըն էր, որ քիչ ատենէն Նէլսընի համակրութիւնը ստանալով, անոր հաւատարիմ սպասաւորը եղած էր։ Ծովակալը հին գրակալ մը տուած էր իրեն, որ զանազան թուղթեր կը պարունակէր, որոնց մէջ կար նաեւ Թրաֆալկարի վերաբերեալ գրութիւն մը։ Ուղեւորը հետաքրքրուելով փափաք յայտնեց տեսնելու այդ թուղթը, և առաջարկեց 250 ֆրանք տալ զայն ստանալու համար։ Վարպետորդի կառապանը առանց հաւանութիւն ցուցընելու ըսաւ թէ քանի մը օրէն պատասխանը կուտայ իրեն. յետոյ այլ և այլ անձերու խորհուրդ հարցուց, որոնք յորդորեցին զինքը որ այդ մեծարգի ձեռագիրը վաճառատեղին տանի գնահատութեան համար։ Մարդը փութաց կատարել ատոնց տուած խորհուրդը, որով 75,000 ֆրանքի պատկառելի գումարի մը գնուեցաւ։ Սակայն և այնպէս, ծերը այդ անակնկալ բախտը ունենալով հանդերձ, կը շարունակէ դարձեալ իր համեստ գործը, ըսելով թէ իր հանգստեան ժամը դեռ չէ հասած։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

**ԱՍՏԻՃԱՆ.**—Սանիէի աստիճան տըրուեցաւ Սելանիկի Թաղապետութեան ճարտարագէտ Մինէքչէ էֆ.ին։ Սալիսէի աստիճան՝ Ուրֆայի գաւառին մարդահամարի պաշտօնեայ Խալիլ Րիֆաթ էֆ.ին։

**ՊԱՇՏՕՆ.**—Այտընի նահանգին Միլաս գաւառակին գայմագամ անուանուեցաւ Ամասրայի միւտիր Ահմէտ Նուրի պէյ։

**ՊԱՏՈՒԱՆՇԱՆ.**—Երկրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Հռոմի օսմ. դեսպանատան առաջին քարտուղար Գույումճեան Յովհաննէս պէյի։

—Լիագաթի ոսկի շքադրամ՝ Բէրգէյայի գաւառին կառավարիչ Մուսթաֆա Զիհնի փաշայի։

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

**ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ՌՈՒՄԱՆԻՈՅ** միջեւ կնքուելիք առեւտրական դաշնագրութեան և հիւպատոսական պայմանագրութեան բանակցութեանց համար երկու կողմի պատուիրակներէն կազմուած յանձնաժողովը, այսօր, իր առաջին նիստը պիտի գումարէ արտաքին գործոց պաշտօնարանին մէջ։

—Պուքրէշի բժշկական վարժարանին երկսեռ ուսանողները, երէկ, Ռումանիա վերադարձան Բէջօթէննէի շոգենաւով։ Մեկնելէ առաջ խնդրեցին կայս. Թիկնապահ Նէճիպ պէյէ՝ իրենց նկատմամբ եղած կայս. շնորհներուն համար իրենց երախտագիտութիւնը մատուցանել յոտս կայս. Գահոյից։ Նաեւ յայտարարեցին թէ Կ. Պոլսոյ այցելութիւնը անմոռանալի պիտի ըլլայ իրենց համար և միշտ յարգալիր զգացումով մը պիտի յիշեն։

—Օգոստոսին Պուքրէշի համալսարանէն երկսեռ ուսանողներու խումբ մըն ալ Կ. Պոլիս պիտի այցելէ։

**ՖՐԱՆՍԱՑԻՔ** յուլիս 14ի տօնին առթիւ, յառաջիկայ կիրակի, օսմ. պահականոցը դրօշներով պիտի զարդարուի և կէսօրին թնդանօթ պիտի արձակէ։

—Նոյն օրը ֆրանսական դեսպանատան մէջ գործակատար Պ. Պոբ շնորհաւորական ընդունելութիւններ պիտի կատարէ։

**ՌՈՒՄԱՆԻՈՅ** դեսպանը, երէկ, Բ. Դուռը երթալով տեսակցեցաւ արտաքին գործոց նախարարին հետ։

**ՆԷՄՍԷՆԻ** երեւելները, երէկ, Պոլսոյ Մեծ-Շուկային զանազան մասերը այցելելով, կարգ մը գնումներ կատարեցին։

**ՍՊԱՆԻՈՅ** դեսպանատունը ծանոյց Բ. Դրան թէ Սպանիոյ կառավարութիւնը որոշած է, վաճառականութիւնը զարգացընելու նպատակով, արտադրող վայրի վկայական չպահանջել Սպանիա ներածուած բերքերու և արտադրութիւններու մէկ քանիներէն. Նաեւ այդ բացառիկ տրամադրութենէն դուրս գտնուած բերքերու և արտադրութիւններու համար պահանջուած արտադրող վայրի վկայականներէն առնուած հինգ բէզէդան երկու բէզէդայի զեղչել։

**ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ** կողմէ Անգլիայէն գնուած 55 ու 56 թիւ փոքր շոգենաւերը, որոնք զատ զատ մասերու բաժնուած Կ. Պոլիս բերուած էին, Շիրքէթի գործարանին մէջ կազմուելով, երէկ ծով իջեցուեցան։ Հիմա կը ներկուին և քիչ ատենէն երթեւեկութեան պիտի սկսին։

**ՊՐՈՒՍԱՅԷՆ** կը գրեն թէ Միզանը տարուած խոզակներու քանակութիւնը հետզհետէ կ'աւելնայ։ Այս տարի ամէն կողմ խոզակը լաւ վիճակի մէջ է։ Գինները 18էն 22 ղրուշ են։ Յունիս 9ին 2,750 քիլօ խոզակ տարուեր է Միզանը, 16ին 63,600 և 18ին 129,000։ Կը կարծուի թէ խոզակի այս տարուան ընդհանուր բերքը երկու միլիոն քիլոյէն աւելի պիտի ըլլայ։

**ԹՐԱՄՈՒԷՅԻ ՆՈՐ ԳԻԾ.**—Թրամուէյի Ընկերութեան ճարտարագէտները սկսան նախնական քննութեանց՝ Պոլսոյ Պայազիտ թաղէն մինչեւ Ֆաթիհ և Ֆաթիհէն ալ մինչեւ Էտիրնէ Գաբու շինուելիք թրամուէյի նոր գիծին համար։ Գիծին անցնելիք տեղերը և գնուելիք շէնքերը որոշելով, քարտէսները պիտի պատրաստեն։

**ԻՏԱԼԻՈՅ** դեսպանատան Արքիմէտ պահականաւը, երէկ առտու, Իտալիա ուղեւորեցաւ։ Միջերկրականի իտալական նաւաբաժինէն այն սպաները որոնք զբօսական պտոյտի համար Կ. Պոլիս կը գտնուէին, նոյն պահականաւով մեկնեցան։ Այդ սպաները Պէյքոզայի առջեւ Ակորսաղ շոգենաւը մտնելով Իզմիր պիտի ուղեւորին։

**ՄԷԻ ԼԻՐԱՆ** նոր գործակատար Պ. Կրէկովիչ երկուշաբթի օրը Կ. Պոլիս պիտի ժամանէ։

**ԵԳԻՊՏՈՍԻ** մէջ Մէմֆիսի տաճարը հողին տակէն երեւան հանելու համար կարգ մը միջոցներ մտադրուած են. կ'ենթադրուի թէ այդ գործողութիւնը տասնըհինգ-քսան տարիէն պիտի աւարտի և տարեկան երեք հազար ոսկի պիտի ծախսուի։

**Կ. ՊՈԼԻՍ-ՍԷԼԱՆԻԿ** երկաթուղիի միացեալ գիծին բաժնետէրերը յունիս 9/22ին գումարուելով, վարչական խորհուրդին տեղեկագիրը կարդացուեր է, ուրկէ կ'երեւայ թէ 1906ի տարեշրջանին շահը 547,789 ֆր. եղած է. բոլոր ծախքերը և պարտաթուղթերու տոկոսները հատուցանելէ ետքը, մնացած 10,210 ֆր.ը աւելցուած է արտասովոր պահեստի գումարին վրայ, որով այդ գումարը հասած է 82,371 ֆր.ի։ Ընկերութեան ամբողջ պահեստի գումարը հիմա երկու միլիոն ֆր.էն աւելի է։

**ՌՈՒՍԻՈՅ** դեսպանը Պէօյիւքտէրէի ամարանոցին մէջ, յառաջիկայ շաբաթ գիշեր, երեկոյթ մը պիտի տայ, որուն ներկայ պիտի գտնուին դեսպանատան պաշտօնեաները և ռուս գաղթականութեան երեւելիները։

**ՍԻՎԱԶԻ** կեդրոնին մէջ և նահանգին ամէն կողմերը վերջերս առատ անձրեւներ տեղացեր են, որով հաստատուած են այն յոյսերը թէ այս տարուան բերքը նախորդներէն աւելի առատ պիտի ըլլայ։

**ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱՅԷՆ** ամսոյս 25 թուականով առողջապահական վարչութեան ուղղուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ անցեալ շաբթու նոյն քաղաքին մէջ ժանտախտէ չորս դէպք ու չորս մահ պատահած են, Տամանհուրի մէջ՝ վեց դէպք ու երկու մահ և Բոռ-Սայիտի մէջ մէկ դէպք։

**ԷՐԹՕՂՐՈՒԼԻ** գաւառին անտառներու քննիչ կարգուեցաւ Կիւմիւշճինէի անտառներու քննիչ Յակոբ էֆ.։

**ԱՆԱՍՆՈՑ ԺԱՄԱՆՈՒՄ.**—Երէկ զանազան վայրերէ Կ. Պոլիս բերուեցան 1846 ոչխար, 195 գառնուկ և 192 եզ։

**«ԹԱԳՍԻՐԱԹԼԸ» ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ.**—Եղեռնադատ ատեանը, երէկ դատեց Պոլիս՝ Գաթըրճըօղլը խանի 65, 66 ու 67 թիւ սենեակները հաստատուած յանձնակատար Մօրիս և Ճուզէփպէ Ֆրիտմանները, որոնք առեւտրական երկրորդ դատարանին կողմէ սնանկ հռչակուած ըլլալով, ամբաստանուած էին թէ խարդախութեամբ սնանկացած են։ Դատավարութիւն կատարուելով խարդախութեան պարագան չհաստատուեցաւ, այլ հասկցուեցաւ թէ հաշուետումարները կանոնաւոր չեն և պարտքերու մէկ մասը հաշուետումարներուն մէջ արձանագրուած չէ, որով իբրեւ «Թագսիրաթլը» սնանկացող դատապարտուեցան մէյմէկ տարուան բանտարկութեան։

**ԵՂԵՌՆԱԴԱՏ** ատեանը, երէկ, դատեց Պէյքոզի անտառի պաշտօնեաներէն Նէճէթ էֆ.ն, որ ամբաստանուած էր թէ անցեալ փետրուարի 7ի գիշերը Պէյքոզի Եալը գիւղին մէջ խաղախորդարանի գործաւորներէն Լօմէրը վիրաւորած և անոր կնոջ ձախ թեւը դաստակէն կտրած էր՝ սպաննելու դիտաւորութեամբ։ Նէճէթ էֆ.ի այդ արարքը հաստատուելով, դատապարտուեցաւ եօթը տարուան տաժանակիր աշխատութեան, 650 ղրշ. իբրեւ վիրաբուժական ծախք և 950 ղրշ. ալ աշխատութենէ զրկուելու իբրեւ փոխարինութիւն հատուցանելու։

**ՍԿՈՒՏԱՐԻ** մէջ Նահիտ անուն մարդ մը, առջի օրը, թթենիի մը վրայ ելած էր ծաղիկ հաւաքելու, երբ իր կոխած ճիւղը կոտրելով Նահիտ վար ինկաւ և աջ սրունքէն ու աջ դաստակէն վիրաւորուեցաւ։

**ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ.**—Շիրքէթի 46 թիւ շոգենաւը, երէկ, ժամ 6ին Սկիւտարէն ճամբայ ելլելով կամուրջ գացած միջոցին, ուղեւորներէն մարդ մը՝ սեւ պեխերով, գէրուկ ու սեւ բաճկոն հագած, ծովը նետուեցաւ։ Շոգենաւը կեցաւ և մակոյկ իջեցուեցաւ, սակայն կարելի չեղաւ այդ մարդը գտնել։

**ԴԱՄԱՍԿՈՍԻ** մէջ նպարավաճառ մը երեք ոսկիի փոխարէն գրաւ բռներ է թէ մէկ գիշերուան մէջ հինգ լիտրա օղի կըրնայ խմել։ Սկսեր է խմել, բայց քիչ ետքը զգայազիրկ մնալով մեռեր է։

**ԻԶՄԻՏԻ** կայարանին մօտ բնակող Էքրէմզադէ Հաճի Ալի էֆ.ի կինը, անցեալ օր, խոհանոցին մէջ աշխատած պահուն, կրակարանէն կայծ մը ցատքելով քարիւղի աման մը կրակ առեր է։ Այդ միջոցին կնոջ հագուստները բռնկեր են։ Դրացիները թէեւ օգնութեան փութացեր են, սակայն ածխացեալ մարմինը գտեր են։

**ԴԱԼԱԹԻՈՅ** Թիճարէթ խանին տակը շաքարի ու խահուէի վաճառական Նորկէի խանութը, առջի գիշեր, գողեր մտան և պարապ դրամարկղ մը կոտրելու ջանացին, սակայն չյաջողեցան և առտուն մօտեցած ըլլալով փախան։

**ԳՈՂԵՐՈՒ ԽՈՒՄԲ.**— Ծանուցուեցաւ թէ երկու նշանաւոր գողեր՝ Թոթօ ու

Եանի, Սինեմքէօյի մէջ, անցեալները կռուած էին՝ գողցուած դրամ մը բաժնելու առթիւ։ Այդ միջոցին իրարու վրայ ատրճանակ պարպելով, Եանի վիրաւորուած էր և կեդրոնական բանտին հիւանդանոցը փոխադրուած։ Եանիի ընկերներէն Եորկի ու Սերիօ, առջի գիշերը, Թոթոյի տունը գացին և «Մեր ընկերը՝ Եանին դուն ձերբակալել տուիր» ըսելով սկսան կռուիլ, բայց դրացիները բողոքեցին, որով փախան։ Քիչ վերջը նորէն հոն գացին և կռիւը վերսկսելով ատրճանակ պարպեցին Թոթոյի տանը վրայ։ Թոթօ ալ փոխադարձաբար պատասխանեց։ Մարդու վնաս չպատահեցաւ. միայն Թոթոյի տանը ապակիները կոտրտեցան։

**ՔՈՐԱՑԻ** Այնալը Չէշմէի կողմը, առջի գիշերը, Հագգը անուն մարդ մը տունը գացած պահուն երեք հոգի վրան յարձակեցան և կողոպտել ուզեցին, սակայն Հագգը դիմադրեց. Նոյն պահուն ուրիշ անցորդ մը երեւան ելաւ, որով երկուքը փախան, իսկ երրորդը նորէն սկսաւ մաքառիլ Հագգըի հետ և անոր ֆէսը յափշտակելով տան մը բաց դուռնէն ներս մտաւ։ Հագգը հետապնդեց. մարդը ֆէսը նետեց և տանը ետեւի կողմէն փախաւ։

**ՊԷՕՅԻՒՔՏԷՐԷԻ** մէջ, առջի գիշերը, վարձու կառք մը տապալեց Մառի անուն կին մը, որ վիրաւորուեցաւ։ Կառապանը ձերբակալուեցաւ։

## ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

### ՀԱՇՈՒԵԿՇԻՌ 31 մայիս 1907ի

| ՊԱՐՏՔ | Ֆրանք |
|---|---|
| Սնտկ. մէջ գտնուած դրմ. | 128,000,530.78 |
| Թղթապանակ | 1,071,397,829.39 |
| Ուրոու | 422,807,005.42 |
| Ընթացիկ հաշիւներ | 496,122,060.— |
| Պարտաթղ. արժեթղ. եւլն. | 8,782,176.66 |
| Անշարժ կալուածներ | 35,000,000.— |
| Զանազանք | 19,697,932.73 |
| Ֆրք. | 2,181,807,534.98 |

| ՊԱՀԱՆՋՔ | |
|---|---|
| Պահեստի դրուած դրմ. | 696,964,365.17 |
| Ընթացիկ հաշիւներ | 858,406,197.65 |
| Ընդունուած փոխնկագ.ր | 143,232,814.79 |
| Վճարելի պարտամրհնկ.ր | 40,581,568.19 |
| Զանազանք | 67,522,589.18 |
| Պահեստի դրամ | 125,000,000.— |
| Դրմագլուխ ամբողջ վճրծ. | 250,000,000.— |
| Ֆրք. | 2,181,807,534.98 |

Վարչ. Խորհրդոյ Նախագ.
Ա. ՄԱԶԵՐԱ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ԽԱՌՆ ԺՈՂՈՎԻ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՆԻՍՏԸ

Խառն Ժողովը գումարուեցաւ այս առաւօտ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, Նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր։ Ներկայ անդամներն էին, Կրօնական Ժողովէն Տ. Գրիգորիս Յովհաննէսեան և Տ. Վահրամ Մանկունի արքեպիսկոպոսները, Տ. Մովսէս եպիսկ. Կէօմիւշեան, Տ. Գրիգորիս վրդ. Պալաքեան, Տ. Յովհաննէս Ա. քհնյ. Մկրեան, Տ. Սահակ Ա. քհնյ. Տէր-Սարգսեան, Տ. Միքայէլ Աչեմեան, Տ. Համազասպ Ընձէրճեան և Տ. Գրիգորիս Ճէպէճեան քահանաները, իսկ Քաղ. Ժողովէն՝ Տիրան պէյ Աչնան, Տօքթ. Տիգրան պէյ Սաէճեան և Մկրտիչ էֆ. Աստանեան։

⁂ Դատական գործոց Բարձր. Նախարարը ծանուցագիր մը ուղղելով Ազգ. Պատրիարքարան, կը յայտնէր թէ Կայս. բարեհաճ Իրատէով հաստատուած է Երուսաղէմայ վանուց խնդրոյն համար Վարչութեան կողմէ Երուսաղէմ ղրկուելիք պատուիրակաց պաշտօնը և արտօնուած է անոնց մեկնումը, և թէ Կայս. այս Իրատէն հաղորդուած է Երուսաղէմի վսեմ. կառավարչին։ Հետեւապէս Ն. Բարձրութիւնը Պատրիարքարանի կ'առաջարկէր՝ Երուսաղէմի վսեմ. կառավարչին ուղղեալ պաշտօնագիրը։

Ժողովը գոհութեամբ տեղեկացաւ և յանձնարարեց իր պատուիրակներուն (Տ. Մանկունի Սրբազան և Արիս էֆ. Ֆէսճեան) պատրաստուիլ մեկնելու։

⁂ Ղալաթիոյ Խնամակալութիւնը իր պաշտօնավարութեան շրջանին լրման պատճառաւ հրաժարական մատուցած ըլլալով, Ժողովը վերակազմեց զայն՝ ըստ Կանոնագրի՝ տասն անդամներով։

Խնամակալութեան նորընտիր անդամք են՝

Աւէտ էֆ. Արսլենեան
Եդուարդ » Դարակճօղլեան
Լեւոն » Յովհաննէսեան
Հրանտ » Ասատուր
Մաքսուտ » Նուրեան
Մկրտիչ » Սասունեան
Յակոբ » Իսահեան
Յակոբ » Ցոլաքեան
Յովհաննէս » Մուրատեան
Տք. Տիրան » Դաւիթմահեան

### ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԿՏԱԿ

Յովսէփ Իզմիրեանց Գրական Յանձնաժողովը հրաւիրուած է այսօր գումարուիլ Ս. Պատրիարք Հօր բնակարանը, Խաչատուրեան կտակի քննիչ մասնախումբերուն տեղեկագիրները քննելու և մրցանակի արժանի լաւագոյն դասագիրքերը որոշելու համար։ Կը լսենք թէ, օսմաներէն լեզուի դասագիրքերու մէջէն լաւագոյնը նկատուած է Պետրոս էֆ. Կոբայեանի պատրաստած մէկ գործը. իսկ Իրագիտութեան դասագիրքերէն՝ մեթոտ տեսակէտով լաւագոյնը նկատուած է Տիկին Հերփսիմէ Սրապեանի մէկ երկասիրութիւնը։

### ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Պէրպէրեան վարժարանի ամավերջի հանդէսը և վկայականաց բաշխումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ ուրբաթ, միջօրէէն յետոյ, Նախագահութեամբ Ս. Պատրիարքին։

⁂ Յառաջիկայ շաբաթ առաւօտ տեղի պիտի ունենայ Բերայի Լուսեան վարժարանի ամավերջի հանդէսը, Ս. Պատրիարքը հրաւիրուած է նախագահելու նոյն կրթական հանդէսին։

### ՍԻՆՈԴԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ս. Էջմիածնի Սինոդը հետեւեալ վճիռներն արձակած է.

⁂ Ցանուցանել Կոնսիստորիային Բեսարաբիոյ, լուծել պսակն Յովհաննու Սահակեան Վանեցւոյ ընդ Մարեմայ Խաչատրեան և արտօնել կինն ի վերստին ամուսնութիւն։

⁂ Ցանուցանել Տ. Խաչիկ Ծ. Վրդ.ի, որում թոյլատրի շարունակել զժողովումն նուիրանաց վասն պէտման Զուարթնոց եկեղեցւոյ։

⁂ Ցանուցանել կտակակատարաց հանգուցեալ Ա. Բ. Ղուկասեանցի, որոց ծանուցանել զընդունելութեանց աշխարհական թեկնածուաց յուսանողութիւն, Գէորգայ Ալթունեան, Յովհաննու Կարապետեան և Ռուբէնի Աբրահամեան։

⁂ Ցանուցանել Կոնսիստորիային Վրաստանի, որում տուեալ գիտել լուծումն պսակի Կարապետի Այվազեան ընդ Աննայի Գէորգեան, որում թոյլ տուեալ մտանել յերկրորդ ամուսնութիւն, իսկ առնն՝ զկնի երկամեայ ապաշխարանաց միայն։

⁂ Ցանուցանել Սինոդի, որով վաւերական համարի պսակն Արշակայ Առաքելեանց ընդ Վարենկան Գասպարեանց, ի 6երրորդու աստիճանի ազգականութեան։

### ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Շատ մը ուսուցիչներ կը գանգատին թէ Թաղական Խորհուրդներու կամ դըպրոցներու վարիչներուն կողմէ ուսումնական տարուան սկիզբը կամ աւելի ուշ իրենց հրաւէր կուգայ այսինչ կամ այնինչ դասը աւանդելու համար։ Այս դրութիւնը երբեք չի կրնար օգտակար ըլլալ մեր դպրոցներուն։ Մեր Թաղ. Խորհուրդներն և դպրոցներու վարիչները այժմէն պէտք է հոգածու ըլլան յառաջիկայ տարուան համար իրենց ուսուցչական մարմինները կազմելու, որպէս զի վերջիններս ալ ժամանակ ունենան իրենց աւանդելիք նիւթը տեղական պարագայից յարմարցնելու և իրենց ստանձնելիք դասերուն թիւն ու ժամերն ալ պատշաճեցնելու։ Ինչպէս ուրիշ առիթներու մէջ յաճախ, նոյնպէս ալ այժմ Թաղական Խորհուրդներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք աժան և անարժէք ուսուցիչներ որոնելու ու վարձելու յոռի սովորութեան վրայ։ Դպրոցներու գիտական և բարոյական մակարդակը ամէնէն աւելի ուսուցիչները կը բարձրացնեն և երբ մարդ իր զաւակներուն լաւ կօշիկներ շինուած զգեստներ հագցնելու համար կարելին կ'ընէ, ո՛րքան եւս հոգածու պիտի ըլլայ անոնց մտաւոր ու բարոյական շինութեան ու վերանորոգութեան մասին։ Լաւ է քիչ ուսուցիչ պահել և ընտիրներ վարձել, քան անկարող և աժան ուսուցիչներու խումբեր ունենալ, որոնք կրթական գործին աւելի պիտի վնասեն քան թէ օգնեն։

### ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ ՇՈՒՐՋԷՆ

Ստորեւ կը հրատարակենք Հ. Գէորգ վրդ. Բանջիկեանի տեղեկագրին այն մասը, որուն նկատմամբ դիտողութիւն ըրած էինք։ Հ. Գէորգ վրդ. Բանջիկեան եւս Հայ-Լուսաւորչականները օտարազգիներու շարքը չի դասեր, ինչպէս Հայ-Բողոքականներէ և Հայ-Կաթոլիկներէ ոմանք։ Ահաւասիկ Բանկալթիի Վիեննացւոց դպրոցի Գեր. Տեսչին մեզի ղրկած այդ հատուածը.—

«Այս տարի վարժարանս ունեցաւ 128 աշակերտ. սակայն վճարմանց դժուարութեանց պատճառաւ, այսօր 118 աշակերտով կը փակենք վարժարանս։ Բայց ի մեր ազգայիններէն՝ ունեցանք նաեւ՝ ինչպէս ուրիշ տարիներ, օտարազգի աշակերտներ (Թուրք, գաղղիացի, իտալացի, յոյն, մէլքիթ), որոնց մէկ ստուար թիւը կը կազմեն Յոյները։ Իսկ առաջիկայ դպրոցական շրջանին համար նորոգապէս արձանագրուողներուն մէջէն շատերը օտարազգի են։»

* * *

Կրօնական Ժողովը երէկ գումարուեցաւ Պատրիարքարանի մէջ, Նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Տ. Վահրամ արքեպիսկ.ի։ Ներկայ էին Տ. Գրիգորիս, Տ. Գաբրիէլ և Տ. Մովսէս Սրբազանները, Տ. Ղեւոնդ Դուրեան և Տ. Գրիգորիս Պալաքեան վրդ.ները և Տէր Սարգսեան ու Սամուէլեան Ա. քհ.ները և Աչեմեան, Ընձէրճեան ու Ճէպէճեան քհ.ները։

Ժողովը զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով.— 1. Այլ և այլ գաւառներու Առաջնորդարաններէ հաս ու չհաս ամուսնական խնդիրներու պատճառաւ օտար եկեղեցիներու դիմող և անոնց կողմէ պսակուող ազգայնոց մասին դիտողութիւն եղած ըլլալով, Ժողովը որոշեց շրջաբերականաւ յայտարարել թէ այդպիսիներու պսակը անվաւեր է և անոնք կը զրկուին Հայ Եկեղեցւոյ հաղորդակցութենէ։ — 2. Նիկոմիդիոյ Տեղապահ Տ. Եմմանուէլ վրդ. կը խնդրէր 5-6 տարիներէ ի վեր այրիացեալ Տ. Վահան քհ. Սեւիմճեանը վեղարի օրհնութեան արժանացնել։ Ժողովը արժան դատեց պատասխանել թէ աւելի լաւ է որ իբրեւ քահանայ պաշտօնավարէ։— 3. Պրուսայի Առաջն. Փոխանորդ Տ. Վարդան վրդ. կը տեղեկագրէր թէ փետրուար ամսոյ սկիզբները քաղաքին մէջ յանկարծ երեւցած է վարդապետի տարազով անծանօթ անձ մը, մօտաւորապէս եօթանասնամեայ, նիհարակազմ, ալեխառն մօրուքով, որ իր ինքնութիւնը յայտնող ո և է վկայագիր չունէր. երբ հարցաքննութեան կ'ենթարկուի, կը յայտնէ թէ ինք Լիմ Անապատի միաբաններէն է և անունն է Յակոբ վրդ. Թերզեան. ճամբայ ելած է Երուսաղէմ ուխտի երթալու համար և Մշոյ ու Կեսարիոյ վանքերը այցելելով և Գոնեա ու Էսկիշեհիր հանդիպելով Պրուսա եկած է։ Յիշեալը Պալըքէսէրի մէջ ալ զինք Եպիսկ. վրդ. անունով ներկայացուցած և Կէյվէ Միջագետքցի ըլլալը յայտնած է։ Ժողովը համոզում գոյացնելով թէ յիշեալը ինքզինքը վարդապետ ձեւացնող խաբեբայ մըն է, որոշեց առանձինն շրջաբերականաւ ի գիտութիւն Ժողովրդեան, ծանուցանել թէ երբ այդ տեսակ մէկը երեւնայ ուրիշ տեղ մը, իբրեւ վարդապետ չճանչցուի։ 4.— Սպերի Առաջն. փոխանորդ Տ. Համազասպ վրդ. Վարդանեան կը խնդրէր որ իր այդ կողմերը վարած երկքամեայ պաշտօնավարութիւնը բաւ համարելով, ուրիշ ինքնուրոյն ու յարմար պաշտօն մը յանձնուի իրեն։ Ժողովը արժան դատեց տեղապահներու և առաջ. փոխանորդներու ընտրելեաց ցանկին մէջ անցընել։ 5.— Ուրֆայի եկեղեց. քննիչ Տ. Փառէն վրդ. տեղւոյն քաղաքական, վարչական Ժողովոց և դատաստանափոխութեան քննութիւնը կատարելով, արդիւնքը կը տեղեկագրէր և առաջարկներ կը ներկայացնէր։ Ժողովը ընդունեց այդ առաջարկները և արժան դատեց հեռագրել որ ըստ այնմ գործի ձեռնարկէ։ Նաեւ նոյն որոշումը հարկ տեսաւ հաղորդել Կեդր. Խառն Ժողովոյ։ 6.— Իզմիրի Առաջնորդ Տ. Եղիշէ եպիսկ. իր անձնական առողջութեան դարմանումին համար Պոլիս գալ կը խնդրէր։ Ժողովը արտօնեց։ 7.— Տ. Ղեւոնդ քհ. Սուքիասեան Գանտիլլիի քահանայ նշանակուեցաւ Ժողովոյ որոշմամբ։

Ժողովը ասոնցմէ զատ զբաղեցաւ ամուսնական և այլ խնդիրներով։

—Իզմիրի Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ վրդ. Խաչէրեան, որ հիւանդ ըլլալով իր ծննդավայրը՝ Պարտիզակ մեկնած էր օդափոխութեան համար, մահկանացուն կնքեր է անտեղ։ Ս. Պատրիարքը հեռագրով ցաւակցութիւն յայտնեց հանգուցեալին ծնողաց։ Տ. Եղիշէ վրդ. ծնած էր 1880ին և Արմաշի Դպրեվանքին շրջանաւարտ եղած՝ 1901ին վարդապետ ձեռնադրուած էր Դուրեան Սրբազանէ։ Գրական կարողութեամբ օժտուած եկեղեցական մըն էր, որ երկու տարի առաջ կրօնական գեղեցիկ բանաստեղծութիւններ հրատարակած է շաբաթաթերթ Մասիսին մէջ։

—Պէօյիւքտէրէի եկեղեցին համար Պատրիարքարանը առժամեայ Թաղ. Խորհուրդ մը կազմած է որուն անդամներն են Տեարք՝ Գասպար Տիլսիզեան, Մկրտիչ Կիլիմճեան, Համբարձում Թնկրեան, Կարապետ Փափազեան և Անտոն Միրասնէճեան էֆ.ները։ Այս մարմնոյն կազմութիւնը ծանուցանող Պատրիարքական պաշտօնագիրը ղրկուեցաւ Պէօյիւքտէրէի եկեղեցւոյն քարոզիչ Տ. Պսակ վրդ.ի։

—Վսեմ. Գ. Նորատունկեան էֆ.ի Տիկինը և Օր. Նորատունկեան նախընթաց օր Բարիզ ուղեւորեցան։

—Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը ընդունելով Տօքթ. Իպլիքճեան էֆ.ի հրաժարականը, ներքին հիւանդութեանց օգնական-բժիշկ Տօքթ. Գազազեան էֆ.ն վիրաբուժապետի օգնական անուանեց է, իսկ Տօքթ. Գազազեան էֆ.ի յաջորդ կարգուեր է Տօքթ. Պենոն էֆ. Պէզազեանը։ Տօքթ. Պէզազեան էֆ. թէեւ երիտասարդ, արդէն անուն մը ունի իր ասպարէզին վրայ, Պէրպէրեան վարժարանի նախկին սան, բժշկական վարժարանը մտած և յաջողութեամբ աւարտած է իր բժշկական ուսումը, գաւառաց մէջ կարճատեւ պաշտօնավարութենէ մը յետոյ, վերահաստատուած է Սկիւտար, որուն Թաղային վարժարանաց Հոգաբարձութեան անդամ է և ուսուցիչ միանգամայն Պէրպէրեան վարժարանի մէջ, մարդակազմութեան և առողջաբանութեան ճիւղերուն։

—Տ. Խաչիկ Ծ. վրդ. արտօնութիւն ստացեր է Բեդերսպուրկի Կայս. հնագիտական Յանձնաժողովէն՝ ներկայ տարւոյ ընթացքին մէջ պեղումներ կատարել քանի մը վայրերու մէջ։ Յիշեալ Վրդ.ը իր խուզարկութիւնները պիտի սկսի Դուինէ, ուր կը յուսայ քիչ ժամանակի մէջ երեւան հանել հետքերը Ս. Գրիգոր եկեղեցին որ կառուցուած է Զ. դարուն և կործանած է Թ. դարուն։ Տ. Խաչիկ Վ. արդէն յայտնի է իր Զուարթնոց կամ Աղապարի Ս. Գրիգոր եկեղեցւոյ մասին ըրած յայտնութեամբ։

* * *

Արեւելքի այսօրուան Ա. էջը նուիրած ենք Տօքթ. Թորգոմեան էֆ.ի ընդարձակ մէկ յօդուածին, ի պատասխան Տ. Միքայէլ քհնյ. Աչեմեանի դիտողութեանց՝ Կ. Պոլսոյ առաջին հայ հիւանդանոցի կառուցման թուականի մասին։ Բանասէր բժիշկը, որ իր հետապնդած հնախուզական խնդիրներուն մանրակրկիտ ու խղճամիտ հետեւող մըն է, իր յօդուածին մէջ յիշուած Զաքարիա Պատրիարքին կոնդակին փոքր լուսանկարն հանել տուած է որ խոշորացոյցով կը կարդացուի։

* * *

### «ԱՒԵՏԱԲԵՐ»

Տր. Հ. Օ. Պարնըմ, որ 1884էն ի վեր կը վարէր Աւետաբերի Տնօրէն-Խմբագրութիւնը, իր կամօք հրաժարած ըլլալով այդ պաշտօնէն, իրեն յաջորդ կարգուած է Մր. Հ. Մ. Ալլէն, որ Նախորդ շաբաթէն ի վեր անցած է թերթին գլուխը։ Աւետաբերի վերջին թիւը տեսակ մը հրաժեշտի ու փոխանցման թիւ էր, որուն ճակատը Տօքթ. Պարնըմ հրատարակած է իր «Հրաժեշտը» և անկէ անմիջապէս յետոյ՝ Մր. Հ. Մ. Ալլէն՝ իր մուտքը ըրած է, ողջոյնի յօդուածով մը։ Հրաժարեալ խմբագիրը հազիւ 70 տարեկան ծերունի մըն է, գրչի գործունէութեան երկարատեւ ասպարէզ մը թողած իր ետին, որուն բաժանումը ցաւ կը պատճառէ թերթին ամբողջ խմբագրութեան ու պաշտօնէութեան, և անշուշտ ընթերցողներուն ալ։ Բաժանման այս ցաւը մեղմացնել կուգայ սակայն իր արժանաւոր յաջորդը Մր. Հ. Ալլէն, որ երկար տարիներ պաշտօնավարած է Պարտիզակ և ատեն մըն ալ գաւառները։ Աւետաբերի նորընտիր տաղանդաւոր Տնօրէն-Խմբագիրը երկար տարիներ վարած է գաւառային կրթական ու հովուական պաշտօններ, և ինք տակաւին երիտասարդ ըլլալով և քաջատեղեակ հայերէն լեզուի, տարակոյս չկայ որ նորանոր բարւոքումներով պիտի օժտէ այդ թերթը։

Արդէն իսկ, առաջին թիւէն, արտաքին ձեւի ու ներքին բովանդակութեան մէջ փոփոխութիւններ ներմուծած է որոնք պիտի ընդարձակուին բնականաբար։

Կը շնորհաւորենք մեր յարգելի պաշտօնակիցն և բարեկամին՝ Մր. Ալլէնի խմբագրական այս նոր պաշտօնը։

### Ս. ՓՐԿՉԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հոգաբարձութիւնս շնորհակալութեամբ կը ծանուցանէ թէ ի Լոնտոն բնակեալ Գալուստ էֆ. Կիւլպէնկեան իր որդւոյն ապաքինման առթիւ յիշելով Հաստատութեանս որբերը, բարեհաճած է Ամեն. Ս. Պատրիարք Հօր միջոցաւ 1000 Ֆր. նուիրել Հիւանդանոցիս։

— Կարապետ էֆ. Անդրէասեանի ընդ Օր. Թագուհի Պէրպէրեանի ամուսնութեան առթիւ փոխան ծաղկեփունջի 108 ղրուշ նուիրած են Հիւանդանոցիս Տ. և Տիկին Հաճի Կարապետ Օհանեան։ Օր. Նուարդ Անդրէասեանի ընդ Յովսէփ էֆ. Յովսէփեանի ամուսնութեան առթիւ փոխան ծաղկեփունջի 108 ղրուշ նուիրած են Տ. և Տիկին Հաճի Կարապետ Օհանեան։ Թորգոմ էֆ. Պէօրէքեանի ընդ Օր. Սիրանոյշ Գ. Աճեմօղլեանի ամուսնութեան առթիւ փոխան ծաղկեփունջի հետեւեալ նուէրներն եղած են.— Գարեգին էֆ. Եսայեան 108 և Եղիարք Թոփալեան 2 6 ղրուշ։

— Ի Բարիզ հանգուցեալ Լեւոն էֆ. Ճեվահիրճեանի յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղկեպսակի 103 ղրուշ նուիրած է Հիւանդանոցիս Ալէքսանդր էֆ. Արթինօֆ։

— Վաղամեռիկ Եւգոյա Նշաստաճեանի յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւններն եղած են Հիւանդանոցիս.— Այրի Տիկին Ագապի Մ. Գալուստաճեան 108, Արմենակ էֆ. Գալուստաճեան 108, Տիկին Սրբուհի Յ. Փափազեան 108, Տ. և Տիկին Յարութիւն Յ. Փափազեան ի Մանչէսդր 108, Յարութիւն և Սեդիկ Նշաստաճեան եղբարք 60 և Սահակ էֆ. Փափազեան 20 ղրուշ։

— Հանգուցեալ Դաւիթ էֆ. Ս. Բէքմէզեանի յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղկեպսակի 108 ղրուշ նուիրած է Հիւանդանոցիս Խաչիկ էֆ. Գալաբեան։

(Հաղորդագրութիւն)

## ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

**ՓԱՐԻԶ**, 9 յուլիս.— Բարիզի Սակարանին մէջ գիներու ընդհանուր անկումը վերսկսաւ։ Գործերը կը քիչնան և գնող չգտնուելով գիները կ'իյնան նուազ կարեւոր վաճառումներու ազդեցութեանը տակ։ Ռուսական արժեթուղթերն ալ աննպաստ տպաւորութեան մը տակ կը գտնուին ֆրանսական ու ռուսական մէկ քանի լրագիրներու բանակռիւին առթիւ։ Ռիօ Թինթօն, որ առջի իրիկունը շատ հաստատուն գինով փակուած էր, Սակարանը բացուելուն 2189ի վաճառուեցաւ, որով 2165ի իջաւ, վասն զի պղինձին գինը 94.15էն 92 5ի իջած էր։ Լոնտոնի Սակարանին մէջ ալ գործ չկայ։ Այսօր կատարուած հաշուեյարդարումը նշանակալից փոփոխութիւն մը առաջ բերած չէ։ Նիւ-Եորքի մէջ ամերիկեան մետաղագործական ու երկաթուղիի բաժնեթուղթերու գիները ինկած են։ Հարաւային Ափրիկէի արժեթուղթերու գիները հանդարտ են։

**ՊՐՈՒՔՍԷԼ**.— Ընդհանուր համոզում կը տիրէ թէ ընկերվարական կուսակցութեան ընդդիմութեանը հակառակ, Պելճիքայի Խորհրդարանին մէջ մեծամասնութիւն մը պիտի կազմուի՝ Քոնկոն նորէն Պելճիքայի անցընելու մասին քուէ տալու համար։

**ՊԵՐԼԻՆ**.— Ալզաս Լօռէնի կուսակալ Հօհէնլօէ իշխանը պիտի հրաժարի յառաջիկայ սեպտեմբերին։

**ԼՈՆՏՈՆ**.— Իվնինկ Սթանտարտ կ'ըսէ թէ անգլիական խումբին բանակցութիւնները Նէվսքիի նաւային մեծ գործարանները ռուս կառավարութենէն գնելու համար, աւարտելու վրայ են։ Գինը չորս հարիւր միլիոն ֆր. է։

— Ճափոնի ելմտական գեր-նախարար Պ. Վաքացուքի, որ Լոնտոն կը գտնուի, յայտարարեր է թէ Ճափոն նորէն արտաքին փոխառութիւն մը կնքելու մտադիր չէ, վասն զի ելմտացոյցին մէջ հասոյթներու առաւելութիւն մը կայ։

**ԼԱ. ՀԷ.**— Մ. Նահանգաց պատուիրակները առաջարկեցին բանի զօրութեան չդիմել՝ պարտք ունեցող փոքր Պետութեանց դէմ։ Պահանջք ունեցող Պետութիւնը պարտաւոր պիտի ըլլայ նախապէս իրաւարարութեան դիմել։

—Տրակայի վարդապետութեան կիրառումը այժմ մը պիտի նկատուի՝ առեւտրական պահանջման պարագային։

—Քօրէայի իշխանը միջազգային Ակումբին մէջ հրապարակախօսութիւն մը կատարեց, Քօրէան չհրաւիրելու անիրաւ ժեստ պէտքը ցոյց տալով։ Իր խօսքերը եռանդագին ծափահարուեցան։ Նիւ-Եորք Հէրըլտ հրաւիրած է Քօրէայի իշխանը՝ ուղեւորութիւն մը կատարել Ամերիկայի մէջ հրապարակախօսութիւններ ընելու։

—Բոլորովին անհիմն է Պարիզեան լրագրի մը այն լուրը թէ վերջերս հեռագրով կարծիքի փոխանակութիւններ կատարուած ըլլան Պերլինի, Վիեննայի ու Հռոմի միջեւ սպառազինութեանց սահմանափակման խնդրոյն նկատմամբ Լա Հէյի Դեսպանախորհուրդին մէջ։ Դեսպանախորհուրդին սկիզբէն ի վեր միջազգային դիւանագիտական վէճաբանութեանց մէջ այդ խնդիրը նոյն իսկ ձեռք առնուած չէ։

**ԱԹԷՆՔ**.— Կը ծանուցուի թէ մօտերս պիտի վերսկսին դիւանագիտական յարաբերութիւնները Յունաստանի և Ռումանիոյ միջեւ։

**ՆԻՒ-ԵՈՐՔ**.— Ամերիկեան կառավարութիւնը գործողութեան կայան մը պիտի շինէ Փիլիփփինեանց մէջ, որպէս զի կարելի ըլլայ Խաղաղական Ովկէանոսի մէջ համախմբել ամերիկեան ամբողջ նաւատորմը։ Մեծաքանակ պաշար, թորփիլ ու ռազմամթերք Մանիլա պիտի ղրկուին՝ նաւատորմին ճամբայ ելլելէ առաջ, որ հոկտ.ին տեղի պիտի ունենայ։

**ՊԵՐԼԻՆ**.— Մոնաքոյի իշխանը հրաւիրեց Գերմանիոյ կայսրը յառաջիկայ գարնան ներկայ գտնուիլ ովկէանագրական Թանգարանին բացման։ Վիլհէլմ Բ. ընդունեց այդ հրաւէրը։

—Գերմանիոյ ու Ռուսիոյ կայսրերը իրարու պիտի հանդիպին Նորվեկիոյ հիւսիսային եզերքին վրայ։

**ՎԻԵՆՆԱ**.— Աւստրիական ջուրերը այցելելիք ճափոնական մարտանաւերը թորփիլ պիտի ստանան Ֆիումէէն, Յետոյ Թրիէսթէ պիտի հանդիպին։ Այդ մարտանաւերը Սուէզի ճամբով Ճափոն պիտի դառնան։

**ՊԵՐԼԻՆ**.— Ռուսիոյ կայսրը օգոստոսի վերջերը Տարմշդատ պիտի երթայ՝ Հէսի մեծ դուքսին այցելութիւն տալու։

**ՄԱԴՐԻՏ**.— Պարիզի մէջ, Թիւղըրիի մօտ, ինքնաշարժ կառք մը, ուր Քրուք անուն աւստրիացի մը կը գտնուէր՝ իր եղբօրորդւոյն և եղբօր աղջկան հետ, ծառի մը ընդհարեցաւ՝ այնքան ուժգին որ այդ երեք անձերը շատ հեռուները նետուեցան։ Պ. Քրուք թեթեւապէս վիրաւորուեցաւ, իսկ միւսները ծանրապէս հիւանդանոց տարուեցան։

**ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ**.— Ռուսիոյ նախարարաց Խորհուրդը արտօնեց ծովային նախարարութիւնը որ 1908էն մինչեւ 1911 ամէն տարի 31 միլիոն րուպլի յատկացնէ մարտանաւերու շինութեան և անոնց սպառազինութեանց։ Նաեւ 1906ի ելմտացոյցին մէջ նախատեսուած վարկը յատկացընէ նոյն շինութեանց սկզբնաւորութեանը՝ այս տարիէն սկսեալ։

**ՊԵՐԼԻՆ**.— Ճափոնի կառավարութիւնը նաւային թնդանօթներ յանձնարարեց Քրուփի գինագործարանին։

**ՀՌՈՄ**.— Այս տեղի իրազեկ շրջանակներուն մէջ կ'ըսուի թէ Իտալիոյ և Աւստրիոյ-Հունգարիոյ արտաքին գործոց նախարարներուն տեսակցութեան հետեւանքը պիտի ըլլայ քաղաքական ուրիշ տեսակցութիւններ՝ պատրաստելով համաձայնութիւն մը Իտալիոյ, Աւստրիոյ-Հունգարիոյ և Ռուսիոյ միջեւ։

### ԱԶԴ

Յուլիս 10, չորեքշաբթի և յաջորդ օրերը, Բաղճէյի զանազան գոյքեր պիտի ծախուին, ինչպէս սեղան, աթոռ, լամբար, գաւաթ, պնակ, կլկլակ, մեծ պիւֆէ մը, գնդամուղ մը են. են.։ Այդ վաճառումը պիտի կատարուի Օսմ. Կայս. Պանքայի շէնքին մէջ, Մագրիքէօյ, երկաթուղիի կայարանին մօտ։

Կ. Պոլիս, 8 յուլիս 1907 3—1

### ԻԼԱՆ

Շէհր Էմանէթինտէն

Թէփէպաշըխանէլէրէ Նումունէխանէսի վէճհիլէ ալընաճագ իւչ արապանըն պէհէրի մէճիտիէ եիրմի ղուրուշտան իւչ պին ալթը եիւզ ղուրուշա Թալիպի իւզէրինտէ օլուպ հազիրանըն օթուզընճը կիւնիւ իհալէի էվվէլիյէ վէ գէրէ սէֆէր սաաթ սօնրա իհալէի գաթիէսի իճրա օլունաճաղընտան Թէնզիլի իլէ Թալիպ օլանլարըն Շէհր Էմանէթի մէճլիսինէ միւրաճաաթ էթմէլէրի իլան օլունուր։

Ֆի 26 հազիրան 323 2—1

⁂

Միւֆէթթիշ վէ չավուշլարա Հէրէքէ ֆապրիգասը հիմա էտիլէն մամուլաթընտան մէմուր նումունէ գումաշընտան խարթէ բըլաճաղ 486 Թագըմ էլպիսէնին պէհէր Թագըմը 212 ղուրուշտա Թալիպի իւզէրինտէ օլուպ Թէգրարը իւնտէ ֆի նիսպէթինտէ կէօրիւլէն լիւզում հազիրանըն եիրմիսէքիզինճի կիւնիւ իհալէի էվվէլիյէ վէ օթուզընճը կիւնիւ իհալէի գաթիէսի իճրա գըլընաճաղընտան Թէնզիլի իլէ Թալիպ օլանլարըն եւրագը օն նիսպէթինտէ Թէմինաթ աքչէսինի միւսթէսհիպէն Շէհր Էմանէթի մէճլիսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։ 3—3

Ֆի 21 հազիրան սէնէ 323

### ԻԼԱՆ

Պէյ Օղլու Ալթընճը տայիրէսինտէն

Պէքիր Սըրագը էֆէնտի ին Իւմինէ հանըմ զիմմէթինտէ մաղպուրին պին պագախէյի մաթլուպէ օլան մէթալը մալիւմէնին Թէքմինը իսթիֆասը ղըմնընտա մէտիունէ Քէլէտիէ Պէյօղլու Գասըմ պաշա Պայրամ Գարտան Նամընտա մուգայյէտ Կալաթասա Նէլէքնէիէլէ ճատտէսինտէ եէթմիշ ալթը նումէրոլը մա օտա տիւքքեան իլէ Ֆեթհիէ Խոճա Խայրէտտին մահալլէսինտէ Մալթա սօգաղընտա ալթը նումէրօլը եօրգանճը տիւքքեանը վէ Սթէնէատ Նէֆլըշահ Սուլթան մահալլէսինին Տէյիրմէն սօգաղընտա վագը օթուզ աւէօրթ նումէրօլը մա պաղչէ խանէ ինիթիզալըն միւթէֆաըրիգէ օլարաք րուպ հիսսէ տաճ տիւքքեանը եիրմի տէօրթ հիսսէի եէքիւնէ հիսսէի պին ալթը ... վէ մա պաղչէ խանէթէքի հիսսէի չալաւսը տաճ տիւքքեանը հիսսէնի պին ղուրուշ ալթըն ագչէ պէտէլլէ Թալիպի իւզէրինտէ օլուպ Թէքրարը եիրմի գումաշ պէտէլլէ գարար գըլընմըշ օլմաղլա Թալիպ օլանլարըն եւրագը օն նիսպէթինտէ Թէմինաթ աքչէսինի համիլէն Պէյ Օղլու իճրա մէմուրիյէթինէ միւրաճաաթ էթմէլէրի իլան օլունուր։

24 հազիրան 1323

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՄԱՅԵՐ
ՂԱԼԱԹԻԱ-ՊՈԼԻՍ
որ ծանօթ է արանց, կիներու և աղոց յատուկ իր ճաշակաւոր ու նորաձեւ զգեստներով, ամէն օր կը ստանայ եղանակին ապրանքները։
ԻՐԱԿԱՆ ՈՐՈՇ ԳԻՆ
ՊՈՆԷԹՐԻԻ ՆՈՒՐԲ ԱՊՐԱՆՔՆԵՐ
10—2

## ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

| ՓԱԿՈՒՄ Յունիս 26/9 Յուլիս | | |
|---|---|---|
| Օսմ. Փոխ. Միացեալ 4 % | Օ. Ո. | 103 14 |
| Ամէնէն բարձր գին | » | 103 19 |
| Ամէնէն վար գին | » | 103 12 |
| Ռումէլի Երկաթուղի գոց | Ֆր. | 166 1/8 |
| Ամէնէն բարձր գին | » | 166 1/4 |
| Ամէնէն վար գին | » | 164 1/8 |
| Թրամուէյ | » | 52 — |
| **ԲԱՑՈՒՄ Յունիս 27/10 Յուլիս** | | |
| Օսմ. Փոխ. Միացեալ 4 % | Օ. Ո. | 103 13 |
| » » » ժամը 4ին | » | 103 14 |
| Ռումէլի Երկաթուղի | Ֆր. | 166 3/4 |
| » » ժամը 4ին | » | 166 7/8 |
| Քարաֆ Կ. Պոլսոյ | » | 439 — |
| Անատ. Երկթ. Պարտք. Ա. շարք | » | 515 — |
| » » » Բ. շարք | » | 513 — |
| » » բաժնեթուղթ | Ա. Ո. | 17 40 |
| Շիրքէթի Խայրիէ | » | 42 50 |
| Շիրքէթի Խայրիէի Համիտիէ | » | 5 37 |
| Օսմ. Ապահ. Ընկ. | » | 4 27 |
| Օսմ. ծխախոտ | | — — |
| Թրամուէյ բաժնեթուղթ | | 9 60 |
| » հիմնական | | 4 60 |
| » պարտաթուղթ | | 472 — |
| Թրամուէյ | Ֆր. | 53 — |
| Տէրքոսի ջուրի ընկ. | | 321 — |
| Պալըա Քարա Այտըն | | 628 — |
| Միտիլլի պանքա | Օ. Ո. | 6 — |
| Սալօնիքի պանքա | | — — |
| Մերսին Ատանա պարտք. | Ա. Ո. | 16 1/8 |
| Քարասու առանձնաշնորհեալ | | 72 — |
| » սովորական | | 69 — |
| » 5 պարտաթուղթ | | 84 — |
| Քարաֆ Իզմիրի | | 586 — |
| Փոխառ. Հելլենական 5 % | | 255 — |
| Հելլենական պարգեւաւոր Թուղթ | Ք. Կ. | 426 — |
| » » » | Օ. Ո. | 4 04 |
| Լաւրիում | Ֆր. | 67 — |
| Զարթըրը | » | 34 1/4 |
| **ՍԹՈՒԼԱՆՑ** | | |
| Օսմ. Միացեալ 1 օրուան | Օ. Ո. | 2 — |
| » » 8 » | | 4 25 |
| Ռումէլի երկաթուղի | Ֆր. | — — |
| Փոխ. Հրապարակ Օսմ. Պանքայի 6 1/2 % | | |
| **ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ** | | |
| Լոնտոնի վրայ չէք | Ղրուշ | 109 1/2 |
| Բարիզի » » | Ֆրանք | 22 96 1/4 |
| Վիեննայի » » | Քուրոն | 21 99 |
| Պերլինի » » | Մարք | 18 67 |
| **ԴՐԱՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ** | | |
| Անգլիական ոսկի | Ղր. | 109 35 |
| Ֆրանսական » | » | 87 13 |
| Գերմանական 20 մարք | » | 106 10 |
| Բոլ Էմփէրիալ | » | 91 20 |
| Մէճիտի տարբերութիւն | » | 107 15 |
| Արծաթ մանրուք | » | 104 10 |
| Մէթալիք | » | 101 10 |
| Պոլսի Թղթադրամ | Օ. Ո. | 8 70 |

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆ

| ՓԱՐԻԶ, 9 Յուլիս | | | |
|---|---|---|---|
| Միացեալ Օսմ. պարտք. ) բաց. | | Ա. Ո. | 95 10 |
| ) գոց. | | » | 95 — |
| Ռումէլի երկաթուղի | | Ֆր. | 169 - |
| Թրամուէյ | | » | 53 75 |
| Օսմ. Կայս. Պանքա | Ք. Կ. | » | 686 — |
| Ռէժիի բաժնեթուղթ | | » | 447 — |
| Պալիա Քարա Այտըն | Ք. Կ. | » | 628 — |
| Օսմ. մաքսատուն | | » | — — |
| Ֆրանս. Ռանթ 3 % | Ք. Կ. | » | 95 12 |
| Քրէտի Լիոնէ | | » | 1166 — |
| Ռուսական 5 % | | » | 86 25 |
| Իտալական Ռանթ | Ք. Կ. | » | 101 65 |
| Սպանիական արտաքին | Ք. Կ. | » | 92 87 |
| Չէք Լոնտոնի վրայ | | » | 25 145 |
| Դրամագէղչ Ֆրանս. Պանքայի | | » | 3 1/2 |
| **ԼՈՆՏՈՆ, 9 Յուլիս** | | | |
| Միացեալ Օսմ. պարտք ) բաց. | | Ա. Ո. | 94 87 |
| ) գոց. | | » | 94 87 |
| Օսմանեան Կայս. Պանքա | | » | 17 25 |
| Էժիբթիէն միացեալ | | » | — — |
| Անգլիական քոնսոլիտէ | | » | 84 37 |
| Հելլենական 5 % 1881 | | » | 49 50 |
| Զարթըրը | | » | 1 34 |
| Պուլկարական փոխառ. 1892 | | » | 103 — |
| Ռանտ Մայնս | | » | 5 47 |
| Ռուսական 4% 1888—1889 | | » | 73 50 |
| Փոխանակագիր Բարիզի վրայ | | » | 25 38 |
| Դրամագէղչ | | » | 4 — |
| **ՊԵՐԼԻՆ, 9 Յուլիս** | | | |
| Օսմ. միացեալ | | | — — |
| Ռուսական 4 % 1902 | | Մարք | — — |
| Ռումէլի երկաթուղի | | » | 143 70 |
| Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամսուան | | » | 20 240 |
| Դրամագէղչ | | » | 5 1/2 |
| **ՎԻԵՆՆԱ, 9 Յուլիս** | | | |
| Ռումէլի երկաթուղի | | Քուրոն | 185 — |
| Վիէննըր Պանք Ֆերայն | | » | 534 50 |
| Փոխանակագիր Բարիզի վրայ | | » | 95 76 |
| » Լոնտոնի վրայ | | » | 240 70 |
| Ռուսական 5 % 1906 | | » | 83 20 |
| Օսմ. Ռէժի | | » | — — |

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

### ԻԼԱՆ

(Պօսթա վէ Թէլէկրաֆ Նէզարէթի)

Պօսթախանէլէրէ իխթիյաճ օլունմագ իւզրէ լիւզումը օլան 465 ատէտ լասթիգ էլ ալաթլէրը մէվգի միւնագասայա վազ գըլընմըշ օլմաղլա Թալիպ օլանլարըն եւրագը 10 նիսպէթինտէ Թէմինաթը նագտիէ վէ խարճ Տէրսաատէթ Թէճարէթ Օտասընտա մուգաւվէլէթ մուհաբիրլիկինտէն մուսատտագ գէֆալէթը գալիյէլի համիլէն Թէլէկրաֆ վէ Պօսթա Նէզարէթը ալիյէսի մէճլիսինէ խարէճ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։

Ֆի 24 հազիրան 323

⁂

323 սէնէսի միւրթէֆէյաթընտան օլարագ միւպաեաաթը լազըմ կէլէն խուրճ վէ չանթա վէ չուվալ վէ սաիրէնին մէվգի միւնագասայա վազ գըլընմըշ օլմաղլէ Թալիպ օլանլարըն եւրագը օն նիսպէթինտէ Թէմինաթը նագտիէ վէ խարճ Տէրսաատէթ Թէճարէթ Օտասընտա մուգաւվէլէթ մուհաբիրլիկինտէն մուսատտագ գէֆալէթը գալիյէլի համիլէն Թէլէկրաֆ վէ Պօսթա Նէզարէթը ալիյէսի մէճլիսը խարէճինէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։

Ֆի 24 հազիրան 323

## ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ

Ազդ.—Օսմ. Կայս. Պանքան մրցումի կը դնէ հինգ պաշտօններ Կ. Պոլսոյ և գաւառի իր գրասենեակներուն համար։ Քննութեան առարկաներն են.—Առեւտրական ու վարչական թղթակցութիւն ֆրանսերէն կամ անգլիերէն լեզուով. Թեկնածուներուն խօսած կամ գրած լեզուները և մասնաւորաբար Թուրքերէն. տարերք հաշուակալութեան, առեւտրական իրաւագիտութեան և աշխարհագրութեան. տոկոսի, զեղչի և դրամի փոխանակութեան վերաբերեալ հաշիւներ. արբիթրաժ, դրամի վրայ գործառնութիւններ, արժեթուղթերու գնում և վաճառում եւայլն։

Մրցման մասնակցելու փափաքող Թեկնածուները պարտին իրենց խնդրանքին հետ ներկայացնել լաւագոյն յանձնարարականներն ու երաշխաւորութիւնները և իրենց տարիքը հաստատող Թուղթեր։ Օսմ. Կայս Պանքան իրեն կը վերապահէ մրցման ընդունելութեան բոլոր պայմանները գնահատելու գործը։ Տարիքի որոշեալ սահմանը 17էն մինչեւ 30 պէտք է ըլլայ։ Քննութիւնը պիտի կատարուի օգոստոս ամսուան ընթացքին մէջ։ Մրցման քննութեան ընդունուող Թեկնածուները զեկուցում մը պիտի ստանան, որուն մէջ Թուականը որոշուած պիտի ըլլայ։ Թեկնածուներէն կը խնդրուի որ Ղալաթիոյ Պանքան ներկայանան արձանագրուելու համար, յուլիս 2էն 31, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը, ժամը 2-5, կէս օրէն յետոյ։

Ծանօթ.—Մինչեւ հիմա եղած պաշտօնի խնդրանքները չեղեալ կը նկատուին։ 20—8

⁂

Ա.Զ.Դ.—Մաքսային 4 % օսմ. փոխառութեան պարտաթուղթերէն ունեցողներուն կը ծանուցուի թէ, յուլիս 1/14էն սկսեալ, պայմանաժամը յիշեալ Թուականին աւարտող թիւ 9 կտրօնին վճարումը պիտի կատարուի Օսմ. Կայս. Պանքայի Ղալաթիոյ կիչէներուն կողմէ, ամէն օր, առտուան ժամը 10էն մինչեւ 2½ կէսօրէն յետոյ, բաց ի կիրակի օրերէն, իսկ ուրբաթ օրերը, ժամը 10էն մինչեւ կէս օր։ Ի փոխարէն այդ կտրօններուն, որոնց հետ գտնուելու են Թուակիր պօրտըրօներ, պարտաթուղթի տէրերուն պիտի յանձնուի ընկալագիր մը, որ վճարման համար պէտք է ներկայացուի Օսմ. Կայս. Պանքային արկղը, Ղալաթիա, իր շրջաբերութեան Թուականէն 10 օր յետոյ։

⁂

Ա.Զ.Դ.— 1901—1905ի 4 % օսմ. փոխառութեան պարտաթուղթերէն ունեցողներուն կը ծանուցուի թէ յուլիս 1/14էն սկսեալ, պայմանաժամը նոյն Թուականին աւարտող թիւ 4 կտրօնին վճարումը պիտի կատարուի Օսմ. Կայս. Պանքայի Ղալաթիոյ կիչէներուն կողմէ, ամէն օր, առտուան ժամ 10էն սկսեալ մինչեւ 2½ կէս օրէն յետոյ, բացի կիրակի օրերէն, իսկ ուրբաթ, ժամը 10էն մինչեւ կէս օր։ Ի փոխարէն այդ կտրօններուն, որոնց հետ գտնուելու են Թուակիր պօրտըրօներ, պարտաթուղթի տէրերուն պիտի յանձնուի ընկալագիր մը, որ վճարման համար պէտք է ներկայացուի Օսմ. Կայս. Պանքայի Ղալաթիոյ արկղը, շրջաբերութեան Թուականէն 10 օր յետոյ։

⁂

Ա.Զ.Դ.— 1896ի 5 % օսմ. փոխառութեան պարտաթուղթերէն ունեցողներուն կը ծանուցուի թէ յուլիս 1/14էն սկսեալ, պայմանաժամը նոյն Թուականին աւարտող թիւ 22 կտրօնին, ինչպէս նաեւ անցեալ յունիս 2/15ի վիճակահանութեան մէջ ամորթի ելած պարտաթուղթերուն վճարումը պիտի կատարուի Օսմ. Կայս. Պանքայի Ղալաթիոյ կիչէներուն կողմէ, ամէն օր, առտուան ժամը 10էն մինչեւ 2 կէս օրէն յետոյ, բաց ի կիրակի օրերէն, իսկ ուրբաթ օրերը ժամը 10էն մինչեւ կէս օր։ Ի փոխարէն այդ կտրօններուն, որոնց հետ պէտք է գտնուին պօրտըրօներ, պարտաթուղթի տէրերուն պիտի յանձնուի ընկալագիր մը, որ վճարման համար պէտք է ներկայացուի Օսմ. Կայս. Պանքայի Ղալաթիոյ արկղը, իր շրջաբերութեան Թուականէն տասը օր յետոյ։

Կ. Պոլիս, 2 յուլիս 1907 14—7

⁂

Ազդ.—Օսմ. Կայս. Պանքայի բաժնետէրերու ժողովը, յունիս 26ին Լոնտոն գումարուած, որոշած է 1906 տարուան համար շահաբաժին վճարել 18 շիլին, կամ 22.50 ֆր. կամ 99 ղրուշ ոսկեդրամ։ Այս վճարումը պիտի կատարուի յուլիս 2էն սկսեալ, Պանքային կեդրոնատեղիներուն մէջ՝ Կ. Պոլիս, Լոնտոն ու Բարիզ, ինչպէս նաեւ գործակալութեանց ու մասնաճիւղերու կողմէ, թիւ 49 կտրօնին փոխարէն։ 20—10

Կ. Պոլիս 27 յունիս 1907

---

# ԱԼԱՇԷՀՐ

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՈՒՐ ԱԼԱՇԷՀՐԻ
(ՖԻԼԱՏԷԼՖԻԱ)
"ՍԱՐԸ-ԳԸՋԻ" ԱՂԲԻՒՐ
ՍԵՂԱՆԻ ՋՈՒՐԵՐՈՒՆ ԻՏԷԱԼԸ

Ոև է մանրէէ զերծ, ամէն ստամոքսի կը յարմարի այս հանքային ջուրը։ Շատ օգտակար է ՍՏԱՄՈՔՍԱՑԱՒԵՐՈՒ, ԼԵԱՐԴԻ, ԱՂԻՔԻ, ՄԻՋԱՆՑՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ։ Կը բուժէ ՇԱՔԱՐԱԽՏԸ, ԱԻԱԶԱԽՏԸ և ԱՆԱՐԻՒՆՈՒԹԻՒՆԸ, ինչ որ տիեզերապէս հաստատուած է նշանաւոր բժիշկներու և քիմիագէտներու կողմէ տրուած վկայականներով։ Շաբաթը երկու անգամ կանոնաւորապէս հոս կը ղրկուի այդ հանքային ջուրը, որ թարմ կ'ըլլայ բնականաբար և իր մէջ կը պարունակէ այդ փնտռուած ջուրին յատուկ բոլոր ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Կը վաճառուի բոլոր դեղարաններու, ճպարավաճառանոցներու, ճաշարաններու եւ գարեջրատանց մէջ։

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՈՒՐԵՐՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱԹԱՆԱՍՈՒԼԱ եւ ՔԻՕՆԻ
ԻԶՄԻՐ
ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ՔՈՒՐԹԷՍԻ եւ ՎԱՍԻԼԻԱՏԻ
36—5 Սաւրգիէ խան, Պոլիս

# ՊԱՆՔ ՏԸ ՍԱԼՈՆԻՔ
BANQUE DE SALONIQUE

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 10,000,000 Ֆր.
ՎՃԱՐ. ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 8 Մարտ 1906ին
8,000,000 Ֆր.
ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 8 Մարտ 1906ին
3,700,000 Ֆր.
ԿԵԴՐՈՆՆ Է ՍԵԼԱՆԻԿ

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ՝ Աղեքսանդրիա, Դոմբրէ, Գավալա, Կ. Պոլիս (Ղալաթիա և Պոլիս), Մանասըր եւ Իզմիր։

ՊԱՆՔ ՏԸ ՍԱԼՈՆԻՔ խնամով կը կատարէ Կ. Պոլսոյ, Եւրոպական Թուրքիոյ ու Ասիոյ և Եգիպտոսի հրապարակներուն, ինչպէս նաև միւս օտար քաղաքներուն վրայ քաշուած փոխանակագիրներ։ Չէքերու հաշիւներ կը բանայ։ Արժեթուղթերու վրայ փոխատուութիւններ կ'ընէ։ Սակարանական հրամաններ կը կատարէ եւրոպական բոլոր հրապարակներուն վրայ։ Չէքեր ու վարկագիրներ կը հանէ Թուրքիոյ և արտասահմանի բոլոր քաղաքներուն վրայ։ Աւանդներ կ'ընդունի ի տես վճարելի և 3, 6, 9, 12 ամսուն որոշ պայմանաժամերով։ Վերջապէս սեղանաւորական ամէն գործառնութիւններ կը կատարէ լաւագոյն պայմաններով։ Պանք տը Սալոնիք փոքր վճարումներու համար ալ խնայողական սնտուկ մը ունի, շատ նպաստաւոր պայմաններով։ 50—47

ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՄԱՐՈՔԵԱՆ ԵՒ ՀԱՅ.
Ն. ՓԱՔԷ եւ ԸՆԿ.

ՍՓԱՌՈՒՐԾ ՇՈԳԵՆԱՒԵՐ
Յուլիս 9ին, Սիրֆասի, Մարսիլիայէն
Յուլիս 15ին, Իմէրէդի, Սեւ ծովէն
Յուլիս 23ին, Ֆրէժի, Մարսիլիայէն

ՄԵԿՆՈՒՄՆԵՐ
Յուլիս 10ին, Սիրֆասի, Զօնկուլտաք, Սամսոն, Տրապիզոն, Պաթում, Նովորոսիսք
Յուլիս 16ին, Իմէրէդի, Մարսիլիա
Յուլիս 24ին, Ֆրէժի, Զօնկուլտաք, Սամսոն, Տրապիզոն, Պաթում, Նովոռոսիսք

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա | կարգ | Բարիզի համար | 200 | Ֆր |
| » | » | Մարսիլիոյ | » 160 | » |
| Բ | » | Բարիզի | » 150 | » |
| » | » | Մարսիլիոյ | » 120 | » |

Տեղեկութեանց համար դիմել Գործակալին՝ Թոփհանէ քարափին վրայ։
15 50—30 Թ. ՌԸՊՈՒԼ

# EL DIA
# ԷԼ ՏԻԱ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿ.
Ընդդէմ հրդեհի
եւ ծովային արկածներու
Դրամագլուխ 10,000,000 ԲԷՃԷԹԱ
ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ԳՈՐԾԱԺԻՆ [Սպանիա
Նախագահ Վարչական Ժողովոյ
ԳԱՄԻԼՕ ՏԷ ԱԿՈՒՐՌՈՒԷ ԽՈՒԼՏԱՑ
Վարիչ Տնօրէն
ԼՈՒԻ ՏԷ ԱԿՈՒՐՌՈՒԷ
Ընդհանուր Տնօրէն
50—5 Պ. ՑԻՒՐՉ ՀԷՓ
Ղալաթիա, Վօյվոտա խան

PHOENIX ASSURANCE Ld. Co.
"ՖԻՆԻՔՍ"
ESTABLISHED 1782

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ԼՈՆՏՈՆ 1782 ԻՆ
ԿԸ ԳՈՐԾԷ Ի ՊՈԼԻՍ 1869էն Ի ՎԵՐ
ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
Դրամագլուխ եւ պահեստի դրամ
Անգլ. ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ սոսկ հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ եւ փութաջան մէջ իր անմիջական վճարումներով։

ՖԻՆԻՔՍ կ'ապահովագրէ հրդեհի եւ կայծակի դէմ ամէն տեսակ անշարժ և շարժուն ստացուածք, յոյժ նպաստաւոր պայմաններով։

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ։ Ցարդ վճարած է աւելի քան 27,000,000 անգլ. ոսկի։

Ընդհ. գործակալ եւ Պոլսոյ եւ գաւառաց՝ Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Վիքթորիա խան, Պանք Օթօման մօտ, Ղալաթիա։
Փոխ գործակալ ի Պոլիս
ՃԻՎԱՆ ԹԷՔԷԵԱՆ
50—39 Ֆինճանճեան խան

# ԱԹԷՆՔԻ ՊԱՆՔԱ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ ԱՄԲՈՂՋԱՊԷՍ ՎՃԱՐՈՒԱԾ
50,000,000 Տրախմի
ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ԱԹԷՆՔ

Մասնաճիւղեր ունի Կ. Պոլիս եւ գրասենեակներ՝ Ղալաթիոյ եւ Պոլսոյ կողմը Լոնտոն, Աղեքսանդրիա, Գահիրէ, Սելանիկ, Իզմիր, Պիրէոն, Բաղրաս, Վօլօ, Շիրա, Քալամաթա, Քանէ եւ Քանտիա (Կրէտէ)։

Դրամագլուխին և աւանդ ձգուած դրամին ու արժեթուղթերուն արժէքը, Օգոստոս ամսուն, կը հասնի 260,000,000 դրախմիի։

Աթէնքի Պանքան կը զբաղի Պանքայի ամէն տեսակ գործառնութիւններով։ Փոխառութիւններ կ'ընէ վաճառքներու, արժեթուղթերու վրայ և Եւրոպական Թուրքիոյ վրայ քաշուած փոխանակագիրներ կը զեղչէ։

Աթէնքի Պանքան հաշուեբացումներ կը բանայ, չէքեր, վարկագիրներ կը հանէ, հեռագրական հրամանով վճարումներ կը կատարէ Թուրքիոյ գլխաւոր քաղաքներու և արտասահմանի մէջ։ Սակարանական հրամաններ կը կատարէ, թէ՛ մեր հրապարակին և թէ օտար հրապարակներուն վրայ, յաճախորդներուն շատ նպաստաւոր կերպով։

Շատ փոքր վարձքի մը փոխարէն՝ արժեթուղթեր կը պահէ, աւանդի ձեւով և ուղղուած առանը հոս առնելու պայմանով։ Ամէն կարգի կտրօններ կը գանձէ և զեղչի գործողութիւններ կը կատարէ։ Աթէնքի Պանքան հանրութեան տրամադրութեան տակ կը դնէ արկղամուրի խորշեր, փոքր վարձքերով։

Աւանդի ճիւղ

Աթէնքի Պանքան իբր աւանդ կ'ընդունի դրամ և արժեթուղթ, սա տոկոսները վճարելով.

| | | | |
|---|---|---|---|
| Ուզուած ատեն դրամ քաշելու պայմանաւ | | | 3% |
| Վեց | ամսուան | համար | 3½% |
| Մէկ | » | » | 4 — |
| Երկու | » | և աւելի | 5 — |

Աւանդ ձգուած դրամները կը վճարուին այն դրամով որով Պանքան ձգուած են։ Տոկոսները կը վճարուին ամէն տարուան Յունուար 1ին և Յուլիս 1ին։

Մասնաւոր տետրակներ՝ 4% տոկոսով

Աթէնքի Պանքան իր յաճախորդներուն մէջ փոքր դրամատէրեր ունենալով և փափաքելով ամէն դիւրութիւն ընծայել, անոնց տրամադրութեան տակ կը դնէ մասնաւոր աւանդներու տետրակներ, որոնց մէջ կրնան արձանագրել առ առաւելն 100 ոսկիի աւանդ գումար մը։ Այդ դրամը 4% տոկոս կը բերէ և մասնակի վճարումներ կը կատարուին, առնուազն 25 ղրուշ ոսկեդրամ։ 50—7

Cie RUSSE
Navigation à Vapeur et de Commerce
ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ
ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Շաբաթուան երթեւեկութիւններ
Յունիս

Դշ. 26/9 Պիրէոն, Աղեքսանդրիա, միջօրէէն առաջ ժամը 10ին։ Հաղորդակցութիւն Բոր Սաիտ ու Սուր ոյ նաւահանգիստները մեկնող շոգենաւերուն հետ։

Դշ. 26/9 Օտեսա ժամը 4ին։ Հաղորդակցութիւն Ղրիմ–Կովկաս, Ղրիմ-Ազով, Օտեսա–Քէրսոն, Օտեսա–Նիքոլայէվ գիծերու շոգենաւերուն հետ։

Դշ. 27/10 Սէվաստոպոլ ժամը 10ին։

Եշ. 28/11 Տարտանէլ, Սիտիլլի, Իզմիր, Քիոս, Թրիպոլի, Պէյրութ, Եաֆա, Բոռ-Սաիտ, Աղեքսանդրիա, իրիկուան ժամը 4ին։

Շբ. 30/13 Օտեսա, ժամը 12ին։

50—47

Արտօնատէր ՋԱՐԵՀ ԽՈՒՍՄԻԽԵԱՆ

## ՁԳԱՅԱՑՈՒՆՑ ՎԱՃԱՌՈՒՄ

| | Ղշ. | | Ղշ. |
|---|---|---|---|
| ԺԻԼԷ, շևիոթէ և ֆանսիէ | 10 | ԳՈՒԼՊԱՆԵՐ, միօրինակ ու յարմար գոյներով | 2 |
| ԺԻԼԷ, ֆանթէզի | 12 | ԳՈՒԼՊԱՆԵՐ, ֆանսի և յարմար գոյներով | 3 |
| ՔՈՍԹԻՒՄ, շևիոթէ և ֆանսիէ | 108 | ՓՈՂԿԱՊՆԵՐ, միօրինակ և յարմար գոյներով | 2 |
| ՊԱՆԹԱԼՈՆ, շևիոթէ և ֆանսիէ | 40 | ՄԵԾ ՄԹԵՐՔ թաշկինակներու, երկվեցեակը | 12 |
| ՊԱՆԹԱԼՈՆ, կոտաէ | 16 | ՕՃԱՌՆԵՐ, քօթ տ'Ազիւր, ընտիր տեսակէ. երեք հատը | 8 |
| ՊԱՐՏԷՍԻՒ, շևիոթէ | 108 | ՇԱՊԻԿՆԵՐ, օձիքը և յառաջակողմը զէֆիրէ | 20 |
| ՔՈՍԹԻՒՄ, տղոց համար շևիոթէ | 40 | ՋԵՌՆՈՑՆԵՐ, կանանց համար, մորթէ և ճերմակ | 9 |
| ՔՈՍԹԻՒՄՆԵՐ, տղոց համար | 20 | ԳԼԽԱՐԿՆԵՐ, «բանամին», արանց և կանանց համար | 10 |
| ՊԼՈՒԶՆԵՐ, կանանց համար, պաթիսթէ յարմար գոյներով | 35 | ԳԼԽԱՐԿՆԵՐ, արանց համար, ծիրարափի ձեւով | 13½ |
| ԺԻՒՊԵՐ, շևիոթէ խիստ նորաձեւ | 50 | ԳԼԽԱՐԿՆԵՐ, տղոց համար, շատ լայն եզրերով | 10 |
| ԺԱՔԷԹՆԵՐ, սեւ սատէնէ և շատ շիք | 70 | | |
| ՖԼԱՆԷԼՆԵՐ, թրիքօ արանց համար, ամէն մեծութեամբ | 10 | | |
| ՎԱՐՏԻՔՆԵՐ, արանց համար, ամէն մեծութեամբ | 11 | | |
| ՖԼԱՆԷԼՆԵՐ, մերինօսէ, չքաշուիլը և բաշխաւորուած | 18 | | |

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ
Ս. ՏԹՐԱՅՆԻ
ԳԱԼԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ
50—19

[illegible]

ՕՍՄ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ԸՆԴՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԻՄՆԵԱԼ՝ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻՆ
1892 Օգոս. 2/14 եւ 1320 Ապրիլ 20 թուակիր Ֆերմանով

Դիմել Ընկերութեան Կեդր. գրասենեակը, Ղալաթիա, Նազըր խան, Հէզա՛ն փողոց, թիւ 14. Թօփհանէ-ի վաճառատանէ զիմաց, կամ հետեւեալ հասցէներուն

Պոլիս, մասնաճիւղ Օսմ. Կայս. Պանքայի Եէնի Ճամիի հրապարակ.
Պոլիս, Արձանագրութեան գրասենեակ Ընկերութեան, Գալիչէ Գափըսը Բրամաւէլի ճամբան, թ. 40, մաքսատան մօտ։
Պոլիս, Մ. Ի. Սառօֆ, Շէյխ իւլ Իսլամ խան, Գալիչէ Գափըսը թիւ 10։
Պոլիս, Ասլան պէյ եւ Ընկ., Վէզնէճիլէր փողոց։
Պոլիս, Գ. Ս. Այմէլօղլու, Էմին-Էօնիւ, Գալիչէ Գափըսը, Իզմիր փողոց։
Գատըգիւղ, Աղեքսանդր Անաստասիատիս չուկայի հրապարակ։
Գատըգիւղ, Մ. Ա. Անգրիտ, Մօտա ճամբայի։
Պէօյիւքտէրէ, Մ. Ս. Տէմարքի։
Բերա, Մասնաճիւղ Օսմ. Կայս. Պանքայի, Մեծ Փողոց
Էրէնգիւղ, Թէօտօր Իտանիտէս, Նամ. կայանի մօտ։
Շիշլի, Մ. Է. Ռոսի, Պէօյիւքտէրէ ճամ. պէսի, թիւ 137։
Ղալաթիա, Մ. Ա. Բիրիանց, թիւ 12, Թիւնէլ խան։
Բէշիկթաշ, Բ. Սամմարթաս։
Մեծ Կղզի, Ռէսուլ էֆ.։
Մաքրիգիւղ, Մ. Ա. Անկէլիտէս, կայարանի հրապարակ։
Սան Սթէֆանօ, Քէչէճեան էֆ.։

17 Գործակալութիւնք Օսմ. գլխաւոր քաղաքաց մէջ։

# ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿ
1907 մայիս 14էն (Ն. Տ.) սկսեալ ցնոր տնօրինութիւն 4

Վոսփորէն Կամուրջ

9 30 Սկտ. ալշկ։
9 30 Արն չնկ պէյլ գուզ պ-կ
9 30 ՍԹՆ միրկ ռ.հիս պէպ անվ գրչ օրԹ պշք։
9 50 Էյգգ բաշ չուպ գանլ ա. հիս գնտ պէշ։
9 30 Ռ ա.գվգ ենիմ մէսր պյրտ Թար ենք միրկ։
10 30 Սկտ Գուզկ.
10 30 Ռ ա.հս միրկ Պէպ Արնվ գրչ օրԹ պշկԹ.
10 45 ենմ մէս պէյրտ ք ճպ Թար ենք սԹՆ միրկ ՊէշկԹ.
11 Վնք. չնկ պէյլ գուզ պշկ
11 Պէյք բաշ չուպ գանլ ա.հիս գանտ պէշկ։
11 20 Ռ ա.գավ ենմ մգրպ պէյրտ Թար ենք միրկ պէշկԹ։
11 35 Միրկ ռ հս պէպ արնվ։
11 40 Պէյրոզ բաշ սԹՆ անլ միրկ ռ.ա.հ ս գնտ պէպ անվ գրչ օրԹ Պէշկ։
11 45 Զնկք. պէյլպ. գուզ.
11 50 Բէնիմ մէսրպ պէօյրտ յրճպ Թարպ Էյրլ Բաշ Չպք անլ ա.հիս գնտ պէշկԹ.
11 55 Գրչ օրԹ պէ Թ
12 15 Ենմ մէս Էյրտ Թար ենք։
12 30 Վնք չնկ պէյլպ գգկ պշկ.
12 45 Միրկ ռ.հս պէպ։
1 Ենք ՍԹՆ գանլ միրկ ռ հիս պէպ արնվ գրչ օրԹ պշքԹ.
1 Բէն մէս պէօ Թրպ ենք միրկ պշկ։
1 Ռ.ա գավպա ենմ Մէս պյրգ բաշ չպք գանլ ա.հսար գնտ պէշ։
1 05 Արնվ. գ չ օրԹ պէշկԹ.
1 15 Գգկ սկտ.
1 15 Ա հիս գնտ վնք չնկ պէյլ գուզ պշկԹ գապ։
2 Միրկ ռ. հս Պէպ արն։
2 Ենմ մէսպ պէյրտ Թրպ ենք սԹՆ միրկ Պէշկ.
2 15 Վ ք չնկ Պէյլ պշկ։
2 20 Գրչ օրԹ գգկ
2 40 Ա.հիս. գնտ վնք չէնկ պէյլ գ կ պէշկ
2 45 Միրկ ռ. հիսար ա պ արն գրչ օրԹ պշկ։
3 Ենմ մէսպ Էյրտ Թրպ ենք սԹՆ միկ պշկ։
3 Պէյրոզ բշպ ենք չպք գանլ ա հս գնտ պ կ
3 30 Վնք չէնկ պէյլ պէշկ.
3 45 Միրկ ռ.հս պէպ արն գրչ ՕրԹ պշկԹ.
4 Ա. հիսար. գանտ. վնք. չէնկ. պէյլպ. գուզ. պէշկ։
4 30 Բէնմ. մէսր. պյրտ. Թրպ. ենք. սԹՆ. միրկ. ռ հիս պէպ պէշկԹ։
4 40 Էպ անվ գրչ օրԹ պ-կԹ։
4 45 Պէյք բաշպ չուպք գնլ ա.հիս գանտ պէյլպ
5 20 Վնք. Զէնկք. պէյլ. Գուզկ. պէշկԹ։
5 35 Ա հիս Էպ. արնվ Գուր ՕրԹ. պշկ։
6 1. Բէնմնլ. մսպ պէյրտ. Թարպ. ենք. սԹՆ. միրկ ռ հիս. պէպ արնվ գրչ. օրԹ. պէշկ։
6 20 Էյք. բշպ. չպք. գանլ. ա.հիս գնտ. պէպ։
7 15 Պէպէք անվ վնք չնկ պէյլ օրԹ պշքԹ գգկ.
7 50 Ռ. ա. գավ ենմ. մէսր. պէօյք. Թրպ. պյգ. բաշպա. չպք. գանլ. ա. հիսար. գանտ. մանիք. չէնկ. պէյլպ. գուզ. սկտ։
8 ա հ սար գանտ Պէպ արնվ չնկ պէյլ օրԹ գգկ պշկ գապ։
8 Պէյրոզ ա. ենք Թ. միրկ ռ ա.հս գնտ պէպ գրչ պշկ
8 15 Ենմ. մէսր.պյրտ. Թրպ. ենք. սԹՆ. միրկ. ռ. հիսար պէպ. արնվ. օրԹ. պշկԹ.
9 40 Ա.հս գնտ վնք
9 5 ՍԹՆ միրկ
10 Ենմ. մէսպ. պյրտ. Թար պէյգ. ենք. ՍԹՆ միրկ. ռ.հիս պէպ. արն օրԹ պշկ
10 15 Սկիւտ. պշկ.
10 [illegible] Գանալ։
10 26 Միրկ ռ հս պէպ։
10 30 Պէյրոզ Չպք բաշ ե ք. գանլ ա. հիս գանտ պէշկԹապ։
10 45 Ռ ա գավ Բէնիմ. մէսր. պէօյք Թրպ ենք Մրկ. պէպ. արնվ. պշկ։
10 48 Արն Վնք. գուզչ. ՕրԹ. գուզ։
11 05 Չնկ պէյլ։
11 05 ՍԹՆ ռ ա.հիս գնտ պէպ արնվ Չէնկ պէյլպ
11 20 Վնք գրչ պէյլ ՕրԹ գուզկ պշկ։
11 45 Էպ պէյգ բշպ չպք գանլ։
12 08 Միրկ ռ.ա.հս Գանալ։
12 45 Ա.հս պէպ։
1 Պէշկ. սկտ։

Կամուրջէն Վոսփոր

10 Պէշկ սկտ։
10 25 Պէշկ պէյլ չէնկ վնք։
10 10 Ա ռ.հիս միրկ.
10 50 Պէ կ գուզկ օրԹ պէյլ գրչ։
11 05 Պէշկ սկտ պէյլ չէնկ։
11 05 Գապ պէշկ գուզկ օրԹ պէյլ չէնկ արն վնք պէպ գնտ ա հս միրկ.
11 15 ՊէշկԹ. օրԹ. գրչ. արնվ. պէպ. ռ. հիս. միրկ. սԹՆ. ենք. Թրպ. պյրտ մէսր. ենմ. ռ. ա. գավպա
11 45 Ռ.հս միրկ։
11 50 Էպ չնկ վնք։
12 Պէշկ. գուզկ. պէյլ. չէնկ. վնք. գանտ ա. հիսար գանլ. չպք բաշպ. պէյգ. Թար։ մ ս. ենմ. գավ։
12 15 Պէշկ օրԹ պէպ գնտ ա.հս։
12 30 Գրչ. ա նվ.
12 45 Պէշկ գուզկ օրԹ պէյլ. պէպ գնտ ա ռ. հիս. միրկ.
1 Գապ. Պէշկ. օրԹ. գրչ. արնվ պէպ ռ հս միրկ. սԹՆ. ենք. Թ պ մէս. ենմ. գավ
1 30 Պէ կ. սկտ
1 35 Սկիւտ գուզկ. պէյլ չէնկ. գնտ ա հս գանլ չպք ենք. բշպ. պէյլոզ.
1 40 Պէյլ չէնկ վնք
1 45 Գապ պէշկ օրԹ արն վ պէպ. ռ հս միրկ.
1 50 ՕրԹ գրչ.
2 Պէշկ. գանտ ա. հիս։
2 30 Պէշկ. օրԹ. գրչ արնվ. պէպ. ռ հիս. միրկ. սԹՆ ենք Թրպ պէօյք. մէս. ենմ գավ։
2 4[illegible] Պէպէք ռ հս միրկ։
3 Պէշկ պէյլ չէնկ վնք։
3 15 ՊշկԹ. գուզկ. պէյլ. չէնկ. գնտ ա. հիս. գանլ. չպուգ. բշպ. պէյրոզ
3 25 Գնտլ. ա.հիս.
3 3[illegible] ԳապԹ. ՊէշկԹ. գուզկ. օրԹ. պէյլ չէնկ. արնվ. վնք. պէպք գանտ. ա. ռ. հիս. միրկ.գանլ. սԹՆ. ենք. բշպ. պէյրոզ։
3 50 Արն. պէպ.
4 05 ՊէշկԹ. օրԹ գուզչ արնվ պէպ ռ.հ ս միրկ սԹՆ ենք Թար պէյք մէս ենմ ռ.գավ։
4 30 ՊէշկԹ գգկ. չէնկ վնք.
4 45 Պէպ. ա.հիս։
5 Պէշկ. գուզկ պէյլ չէնկ վնք գանտ ա. հիս. գանլ չպք բաշ պ յր Թար պէյրտ մէս ենմ
6 Պէշկ օրԹ գրչ ա նվ պէպ ռ հս միրկ սԹՆ ենք Թար պէյրտ մէս ենմ ռ.ա.գավ։
6 1[illegible] Գապ. Պէշկ գուզ պէյլ. չնկ. վնք. պէպ։
6 45 Պէշկ սկտ. գուզկ. օրԹ. պէյլ. չէնկ. արն. Պէպ. գ տ. ա հիս.
7 05 Պէպ. գանտ. ա ռ հիսր. միրկ գնլ չուպ. բաշ Պէյլըոզ։
7 45 Գապ օրԹ գրչ. արն. պէպ. ռ.հ ս. մ րկ սԹՆ ենք Թրպ. պէօյք. մէս. ենմ.
8 4[illegible] Պշկ. գուզկ պէյլ չէնկ վնիք գնտ ա հիս։
8 5[illegible] ՊէշկԿ օրԹ գրչ արնվ պէպ ռ.հիս միրկ սԹՆ
9 15 ՊէշքԹ գանտ ա հիս գանլ չու բաշ պէյրոզ։
9 20 Պէ կ մ րկ ենք. Թար. պէօյք մէս. ենմ. ռ ա.գավ։
9 35 Գգկ պէյլ. չնկ. վնք.
9 40 ՊշկԹ. սկտ գուզկ։
9 45 Պէ կ ՕրԹ գրչ արն Պէպ ռ հիս միրկ։
10 Ենք Թար պյք մէս ենմ։
10 15 Պէշկ օրԹ գրչ արնվ վնք։
11 20 Պէշկ պէպ ռ.հիս սԹՆ։
10 2[illegible] Պ կ գնտ ա.հս գնլ չպք բշպ պյրոզ Թար ք ճպ մէս ռ ա.գավ։
10 3[illegible] Պէշկ գուզկ պէյլ չէնկ.
10 4[illegible] Պէշկ միրկ ենք Թար պէյրտ մէս ենմ։
11 Սկտ. Գուզկ.
11 Պէշկ. օրԹ. Գո չ. անվ. պէպ. գնտ. ա.ռ. հիս. միրկ. գնլ. բշպ. պէյք ղ.
11 05 Պէշկ. պէյլ չէնկ վնք։
11 20 Պէշկ միրկ սԹՆ ենք Թար պյրտ մէս ենմ։
11 35 ՊէշկԹ. գնտ. ա. հս. գնլ. չու. բշպ. պէյրոզ
11 45 ՊէշկԹ. օրԹ. գրչ. արնվ. պէպ. ռ.հիսար. միր. սԹՆ. ենք.
11 5[illegible] ՊէշկԹ. սկտ. գգկ։
11 50 Գուզ պէյլ չնկ. վնք. պէպ. գնտ ա հիս։
12 05 Պշկ. միկ. ենք Թար պէօյ. մէս ենմ։
12 35 Պէշկկ. գգկ. պէյլ. չէնկ. գրչ արնվ.
12 40 ՕրԹ. արնվ. պէպ. ռ.հիս. միկ սԹՆ են։
12 45 Պշկ. գնտլ. ա.հս գանլ. չու. բաշ պէրզ
12 50 Պշկ. ենք. Թրպ. պէօյք. մէս. ենմ.

---

«ԱՐԵՒԵԼՔ»Ի ԹԵՐԹՕՆԸ (129)

[illegible]

# Գեղանի Կոմսուհիի Մը ԱՐԿԱԾՆԵՐԸ

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
## ԾԵՐՈՒԿ ԱՌԻՒԾԸ

### Դ.

### ԻՆՉՔԵՐԸ ՄԻՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՉՐԿՈՒՄ

Մեծ սանդուխէն վար կ'իջնէին. Նաթալի, որ վերը մնացած էր, վար իջնողներուն հետ կը խօսէր։

—Չգիտի յաջողիք... Բ-ան անգամ է որ կը փորձեմ...

—Տեսնենք... Բարիզէն դեռ նոր ստացանք բանալիներու հաւաքածոյ մը... թիւն ինչ է...

—314, ինչպէս ըսած եմ արդէն... բայց ի զուր փորձած եմ...

—Թերեւս մենք աւելի բարեբախտ գտնուինք...

—Կը վախնամ որ...

—Ինչ բանէ կը վախնաս։

—Այդ թիւը փոխած ըլլալէն, առանց բան մը ըսած ըլլալու ինծի...

—Կրնա՛յ։

Լօրան ու Միշէլ անդաստակէն և գետինը տարածուած կոմսին այնքան մօտէն անցան որ այս վերջինը կրնար ձեռքով դպչիլ անոնց։

Ու անհետացան...

Կոմսին աչքերը սոսկումի չողացին, բայց միեւնոյն ատեն մթնեցան։

Երկու եղբայրներու անհետացումը տեսնելով մրմնջեց.

—Այո՛, այո՛, ջանացէք արկղամուրը բանալ, գողե՛ր։

Նորէն ժամ մը անցաւ։ Իր վերեւ ոև է աղմուկ, ոև է դիպուած չէր լսուեր։ Նաթալի անկողին մտած, կը քնանար անշուշտ։ Կոմսը իր թաքստոցէն չէր հեռացած։ Ցայգականթեղին տարտամ և անհաւասար ցոլքերը մինչեւ իրեն կը հասնէին։ Բայց յոգնութիւնն ու յուզումը տակաւ կը թմրեցնէին զինքը։ Աչքերը անդիմադրելիօրէն կը գոցուէին և շատ ծանր բեռ մը կը ճնշէր արտեւանունքներուն վրայ։

Քունին ազդեցութեան դիմադրելու համար պէտք էր որ ոտքի ելլէր ու քալէր։ Բայց կը վախնար որ յանկարծակիի բերեն զինքը։

Կոմսը կը մաքառէր այդ անդիմադրելի զօրութեան դէմ։ Անշուշտ պարտութեան պիտի մատնուէր, երբ տեսաւ որ դրան հին վարագոյրը երերաց ու ներս մտան Միշէլ ու Լօրան։

Ցաչողցուցա՞ծ էին իրենց մեղապարտ ծրագիրը... Պարզ ակնարկ մը բաւ եղաւ վստահեցնելու կոմսը... Գոյներնին նետած էր ու աչքերնին կը շողար կատաղութենէ։

—Մեր բանալիներէն մէկը պիտի բանար փականքը, բայց թիւը փոխուած ըլլալու է...

—Տարակոյս չկայ... 314ը բուն թիւը չէ... Թերեւս վերջին պահուն փոխած ըլլայ զայն...

—Այդ թիւով առաջ ալ չպիտի կըրնայինք բանալ. իբր վստահութեան նշան՝ կոմսին կողմէ դիտմամբ այդ թիւը հաղորդուած է։ Կ'երեւայ թէ կոմսը կը կասկածէր մօրերնուս վրայ։

—Այո՛, թերեւս...

Երկու եղբայրները սանդուխ բարձրացան, իրենց խօսակցութիւնը շարունակելով։ Իրենց խօսքերը մինչեւ կոմսին ականջը կը հասնէին շփոթ բզզիւնի մը պէս։

Կոմսը նորէն սպասեց։ Ալ ևս զինքը խանգարող չպիտի ըլլար։ Քունը աչքերէն կը փախէր։ Ընդհակառակը տեսակ մը տենդ կ'ազդուէր զինքը։ Բայց չաճապարեց բնաւ։

Երբ ապահովուեցաւ թէ Նաթալի ու իր զաւակները, իրենց սենեակները դարձած, վար չպիտի իջնէին ա՛լ ևս, փորձեց ոտքի ելլել. իր հաւասարակշռութիւնը գտաւ՝ այն կարասիին կրթնելով որուն ետեւ պահուըտած էր. յետոյ դրան վարագոյրը վեր առնելով սենեակները մտաւ։

Առանց լոյսի և ծայրայեղ զգուշաւորութեամբ կը յառաջանար, վախնալով որ աթոռի մը կը զարնուի կամ թիկնաթոռ մը կը տապալէ։

Դէպի այն սենեակը ուղղուեցաւ, որ ատենօք իբր աշխատութեան սենեակ ծառայած էր իրեն. դանդաղօրէն բայց խոհեմութեամբ կը յառաջանար։

Աշխատութեան սենեակին մէկ անկիւնը կանգ առաւ...

Եւ որովհետեւ շատ մութ կ'ընէր, կարասի մը փնտռեց խարխափանքով։

Այդ կարասին մարդու մը հասակն ունէր, որովհետեւ կոմսը ծռելու պէտք չունեցաւ։ Փականքի մը թեթեւ աղմուկը և դռնակի մը ճռինչը լսուեցաւ, որ իր ծնկներուն վրայ կը դառնար։ Վերածնութեան ոճով չինուած առարկային դուռն էր, որուն մէջ կը գտնուէր պատին փակած արկղամուրը։ Կոմսին ձեռքերը չդողացին և արկղամուրի ձուլածոյ զանգուածին վրայ գտաւ թիւին պտուտակը... Թեթեւ ճանչիւնով մը երեք անգամ դարձաւ պտուտակը... Վարինը ինն անգամ դարձաւ աղմուկով...

Այդ ճանչիւններէն յետոյ երեւան եկաւ 399 թիւը, նման «Բացուէ՛, ո՛վ Սէզամ»ին՝ Հազար ու մէկ գիշերներու պատմութեան մէջ։

Կոմսը գրպանէն հանեց փոքր բանալին և փականքին մէջ խոթեց։

Ծանր դուռը բացուեցաւ չոր աղմուկով մը...

Այս անգամ կոմսը դողդոջուն ձեռքով պրպտեց դրամարկղին բաժանումները։ Մութին մէջ սփոփանքի և յաղթութեան խոր հառաչ մը արձակեց կոմսը...

Քառորդ մը տեւեց այդ խորհրդաւոր աշխատութիւնը, ղ'որ մութը կը պաշտպանէր. յետոյ ծանր դուռը գոցուեցաւ, ապահովութեան նիգերը նորէն ճանչեցին և բանալին լռիկ ընել տուաւ իր կրկնակ չխինդը... ու փայտէ առարկային դուռը երկաթէ արկղամուրին վրայ սահեցաւ...

Կոմսը, նոյն տենդագին վիճակին մէջ, սենեակներէն անցաւ և բակ հասաւ ընդհուպ...

Ոչ ոք տեսած ու լսած էր զինքը...

Լուսինը անհետացած էր սեւ ամպերու կուտակումի մը տակ։ Գիշերը կը թուէր պաշտպանել կոմսը։

Ծառաներու յարկաբաժնին բակը հասած ատեն կոմսը զարնուեցաւ մէկու մը, որ յանկարծ երեւան եկած ու զինքը գրկած էր ուժգնօրէն։

Չկրցաւ սոսկումի ճիչ մը զսպել։

Բայց քաղցր ձայն մը պատասխանեց.

—Հա՛յր, ես եմ, ես եմ... Չէի կըրնար աւելի երկար ատեն մինակ մնալ... Ձեզի համար վախ կը զգայի...

Հայր և աղջիկ ներս մտան։

Հովը ուժգին կը փչէր պարտէզին ծառերուն մէջ։ Փայլակները իրարու կը յաջորդէին։ Փոթորիկը կը պայթէր...

Քաղաքային Օրինագրքի 490րդ յօդուածը կ'ըսէ. «Կ'ընդունուի ամէն ազգականի կողմէ եղած առաջարկ՝ իր ազգականը մտակարարութեան իրաւունքէ զրկելու մասին»։

Հետեւաբար Նաթալի իրաւունք ունէր կոմսին նկատմամբ այդ տեսակ դիմում մը ընելու։

Բայց այդ ծանրակշիռ ու փափուկ գործին մէջ ոչինչ բաղդին չձգելու համար, իբր առաջնորդ ու խորհրդական առաւ վարպետորդի փաստաբան մը, Տիւֆուրրօ անուն, որուն աչխոյժ իմացականութեան տէր և բոլորովին անխիղճ ըլլալը լաւ գիտէր։

Նաթալի ինք յանձնարարեց խմբագրել դատարանին մատուցուելիք խնդրագիրը։

(Շարունակելի)